

ՇԻՐՎԱՆՋԱԿԷ

Կ Ր Ա Կ



Բ ա զ ու լ

Տպարան «ԱՐՐՐ»
1896

ԱԵՐԵՐ

310

2003

ՍԵՒՆ

340

Շ Ի Բ Վ Ա Ն Ջ Ա Դ Է

Ա.Ա.

Կ Ր Ա Կ

675



ԲԱՔՈՒ
 Տ Պ Ա Բ Ա Ն „Ա. Բ. Ո. Բ.“
 1896

Բժիշկը ոգևորված խօսում էր անհատի և շրջանի փոխադարձ ազդեցութեան մասին, իսկ մենք լուսւմ էինք և վիճաբանում:

Միրաբեանը լուռ էր և, կարծես, չէր հետաքրքրվում մեր խօսակցութեամբ: Նա անթարթ աչքերով նայում էր վառարանին, մերթընդ մերթ շփելով իւր խիտ և կարճ միրուքը, որ արդէն սկսել էր ճերմակել:

— Կրակ էր, ինքն իրան կերաւ, ոչնչացաւ, — արտասանեց նա կամացուկ, շարունակ նայելով վառարանին:

Բժիշկը լռեց, և մենք բոլորս զարմացած նայեցինք Միրաբեանին:

— Ներեցէ՛ք, պարոններ, — ասաց նա, մի քիչ շփոթվելով, — ես մտածում էի, բայց չը կարծէք, թէ ականջ չէի դնում ձեզ:

— Ինչի՞ մասին էիր մտածում, — հարցրեց բժիշկը:

— Զարմանալի է մարդու միտքը... դուցէ գաղափարների ասօցիացիա էր... մտածում էի այս վառարանում այրվող այն կանաչագոյն կեղևով փայտի մասին: Նա մի նորաբոյս ծառի բուն է եղել: Այդ կրակը և ձեր խօսակցութիւնը ինձ յիշեցրին մի դէպք, մի... մի... անբաղդ մարդու կեանքը:

Նշանակում էր, որ Միրաբեանի անսպառ շտեմարանում կար դարձեալ մեզ անյայտ մի պատմութիւն: Մենք միշտ հաճութեամբ էինք

լուսւմ նրան, իսկ նա սիրում էր պատմել: Ինչ ասել կուզի, որ մենք հետաքրքրվեցինք և խնդրեցինք պատմել այն, ինչ-որ այդ բոլորն պատճառել էր նրան այնքան մտախոհութիւն: Մի մի բաժակ թէյ ածելով մեզ համար, նա վառեց մի նոր ծխախոտ և նստեց դարձեալ վառարանի դէմ:

Այն ժամանակ, պարոններ, ես դեռ ուսանող էի, — սկսեց նա անմիջապէս, — և բնակվում էի Մոսկվայի ծուռ փողոցներից մէկում, մի պատուաւոր ընտանիքի մօտ: Նա բաղկացած էր մի պառաւ այրիից և երկու երիտասարդ աղջիկներից — մէկը քսան ու երեք, միւսը մօտ քսան տատարեկան: Մայրը վարձով սենեակներ էր տալիս, մեծ աղջիկը երաժշտութեան դաստառ էր, իսկ փոքրը նոր էր աւարտել գիմնազիօնը: Նրանց հայրը եղել էր երկար տարիներ գերմաներէն լեզուի դաստառ մի արքունական դպրոցում: Այրին նրա մահից յետոյ ստանում էր թօշակ: Բնակարանի եօթ սենեակներից երկուսում կենում էին տանտիրուհիները, հինգը տրված էին վարձով:

Մի օր սենեակներից մէկը դատարկվեց, պառաւը ընկաւ հոգսի մէջ: Նա մեզ խնդրեց, ինչպէս և է, վարձող գտնել: Պառաւի խնդիրը յաջողեց կատարել իմ անակիցներից մէկը — Քի-

զիկօ-մաթեմաթիկական ֆակուլտետի մի հայ ուսանող Զարիֆեան անունով:

Որովհետև Զարիֆեանը դեր է խաղալու իմ պատմութեան մէջ—բարեհաճեցէք լսել նրա մասին մի քանի խօսք: Պարոններ, դա այն մարդկանցից էր, որոնց մասին, հէնց առաջին անգամ նայելիս, կարելի է ասել, թէ կեանքն երբէք նրանց համար տանջանքների բով չի դառնալ: Նրա ամենուրեք կարմիր երեսը, կարմիր ականջները, տափակ ճակատը, բաց-կլինամոնազոյն քծնող աչքերը արտայայտում էին խաբուսիկ համեստութեան և ամբարտաւանութեան մի անորոշ խառնուրդ: Նրա քայլուածքը դանդաղ էր, ձեւերը մեղմ, խօսակցութեան եղանակը մի քիչ արհամարհական, մի քիչ ծանրաբարոյ: Դա նրա բնական յատկութիւնները չէին, այլ արուեստական, շինծու: Նա աշխատում էր երևալ աւելի խոհեմ և հասուն, քան թէ կարող էր լինել քսանուչորս տարեկան մի երիտասարդ, որ այդ տարի պէտք է աւարտէր իւր ուսումը:

Նս գգում էի դէպի Զարիֆեանը մի ինչ-որ խուլ հակակրանք, թէև նա ինձ ոչ մի անախորժութիւն չէր պատճառել: Նա ինձ հետ վարվում էր շատ քաղաքավարի, նոյն իսկ աշխատում էր հաճոյանալ: Նա աշխատասէր էր, հաշուազէտ, խորամանկ և գիտէր գրաւել պրօֆեսսորների ուչադրութիւնը: Նրա աչքերի արտայայտութիւնը պարունակում էր մի ինչ-որ

վատ բան, հոգու մի եսական և անհաճոյ ձգտում, բայց միայն այն ժամանակ, երբ լուռ էր: Դժբաղդաբար, կեանքում առհասարակ դիտող մարդիկ շատ քիչ են պատահում, ուստի Զարիֆեանը իւր ընկերների շրջանում համարվում էր բարեսիրտ, համեստ, ի՞նչ եմ ասում, նոյն իսկ իւր ազնուութեամբ օրինակելի: Այն ինչ՝ ես ոչ ոքից չէի լսում, թէ երբևէ նրա կողմից իրականօրէն արտայայտվել են այդ սիրուն յատկութիւնները:

Ահա այդ երիտասարդը մի օր իւր հետ բերեց բնագիտական ֆակուլտետի մի ուսանողի: Դա նոյնպէս հայ էր և կովկասցի: Առանց երկար խօսելու, նա վարձեց սենեակը ճաշով և նոյն օրն և եթ տեղափոխվեց: Երբօրդ օրից սկսած նա արդէն ճաշում էր մեզ հետ միասին: Նս նստած էի նրան: Նրա թուխ-թուխ դէմքը գունատ էր, աչքերը խոշոր, սևաթոյր, ճակատը լայն և պայծառ: Նրա ուղղագիծ քիթը, նուրբ և մի փոքր կանացի շրթունքները, որ նոր նոր ծածկվել էին կակուղ մազերով, նրա ամբողջ կերպարանքը արտայայտում էին հոգու մի անխառն մաքրութիւն: Նրա նայուածքը խելացի էր և թախծալի: Կար մի ինչ-որ սուր հեղնութիւն այդ նայուածքի մէջ, մի ներքին ծիծաղ, բայց բարի և ցաւակցական ծիծաղ, այն բոլորի վրայ, ինչ-որ տես

նում էր. գոնէ այսպէս թւաց ինձ հէնց անաշին անգամից:

Ճաշի միջոցին, ինչպէս և յետոյ, նա մի վայրկեան հանգիստ չէր մնում: Մասնակցելով մեր խօսակցութեանը, նա մերթ սեղմում էր իւր շրթունքները, դառն ժպտում և ճակատը տրորում, որպէս թէ գլուխը ցաւելիս լինէր, մերթ անսպասելի ցնցումներ էր գործում, որպէս թէ մի անխորժ բան էր լսում: Եւ միշտ նրա կրակոտ աչքերը կայծեր էին ցայթեցնում: Նրա նիհար ձեռները մի քիչ դողում էին, ձայնը երերվում էր խօսակցութեան ժամանակ և երբեմն խեղդվում կոկորդում:

Հետեւեալ օրն ես ճաշի ժամանակ դարձեալ նստեցի նրա դէմուդէմ: Նոյնը արի և երրորդ, չորրորդ օրերը: Կարծես, նրա դէմքի, մանաւանդ աչքերի մէջ կար մի մագնիսական զօրութիւն, որ չէր թողնում իմ հայեացքը հեռացնել նրանից: Մի բան ասելիս, նախ և առաջ նրան էի նայում: Ինձ հաճելի էր նրան նայել: Իսկ նա նայում էր ամենին և ոչ ոքի: Թւում էր, որ նրա միտքը երբէք չի կենտրոնանում իւր սեղանակիցների վրայ, որ խօսելով մեզ հետ, մտածում է ուրիշ բաների մասին:

Հինգ անակիցներից մէկը լեհացի էր, ծառայում էր մի ինչ-որ բանկում, միւսը—ռուս ուսանող, մենք—հայեր, տանտիրուհիները—գերմանացիներ, իսկ խօսում էինք, իհարկէ, ռուսե-

րէն: Այսպիսով մեր սեղանը ներկայացնում էր մի միջազգային խառնուրդ: Զարիֆեանը սովորաբար նստում էր օրիորդների միջև: Այլ ու ձախ ծառայելով մէկին ու միւսին, նա երկուսին էլ հաճոյախօսութիւններ էր անում: Մեծ քոյրը—Մելիտան նշանված էր մի գերմանացի երաժշտի հետ, շուտով պիտի ամուսնանար և այդ միջոցին զբաղված էր իւր հարսանիքի հագուստներով: Նա գեղեցիկ չէր, բայց խելօք էր և բարի: Բաւական սիրուն էր փոքր քոյրը—Ադելաիդան: Նրա մազերը ոսկեգոյն էին, դէմքը առողջ, աչքերը խոշոր և լի կենսասիրութեան հրով, վառվռուն, կազմուածքը կանոնաւոր, միջահասակ: Մի ուրախ ու զուարթ աղջիկ էր, միշտ երգում էր, միշտ թռչկոտում, միշտ ծիծաղում: Եւ դա այնքան ներդաշնակում էր նրա պատանեկական հասակին, որքան ծիծեռնակի երգը—գարնան առաւօտին: Մենք բոլորս սիրում էինք նրան ինչպէս եղբայր, կատակներ էինք անում, բարկացնում, և նրա առողջ քրքիջների շնորհով մեր ճաշն անցնում էր զուարճալի:

Բայց այն օրից, պարոններ, երբ նոր անակիցը դարձաւ մեր ճաշընկերը, միջազգային սեղանի բնաւորութիւնը սկսեց քիչ-քիչ փոխվել: Նա չէր մասնակցում մեր կատակներին և զուարճախօսութիւններին, չէր ծիծաղում և ոչ օրիորդներով զբաղվում: Կարելի էր կարծել, որ մի ծանր, անխուսափելի միտք անընդհատ տանջում

էր նրան: Իսկ իմ հետաքրքրութիւնը օրէցօր աւելանում էր: Փափագում էի, որքան կարելի է, շուտ և մօտիկ ծանօթանալ այդ մարդուն: „Է՛հ, մտածում էի, գուցէ մի վիշտ ունէ՛, գուցէ կարօտ է ընկերական սիփփանքների, և ես կարող եմ օգտակար լինել“: Ես նրան առաջ էլ տեսել էի մի քանի անգամ, բայց ծանօթ չէի: Նա սկզբում եղել էր Պետերբուրգի համալսարանում և հէնց այն տարին էր տեղափոխվել Մոսկվա:

Մի անգամ մենք արդէն ճաշի էինք նստել գերմանական ճշտութեամբ ուղիղ որոշեալ ժամին, իսկ մեր նոր սեղանակիցը դեռ չըկար: Նրա բացակայութեամբ սեղանը առաջուայ պէս ուրախ էր, մանաւանդ օրիորդները: Կար մի բարոյական զօրութիւն այդ երիտասարդի մէջ, որ անբռնաբարելի կերպով ազդում էր մեզ վրայ: Նայելով նրա մշտապէս գունատ ու մեղմադձոտ դէմքին, մենք կամայ—ակամայ զսպում էինք մեր ծիծաղը և նայում միմեանց երեսին:

Արդէն ճաշը աւարտվելու վրայ էր, երբ յանկարծ ներս մտաւ և, առանց սովորական բարեն ասելու, նստեց իւր տեղը: Այս անգամ նրա դէմքն աւելի էր գունատ, աչքերը այրվում էին, մռայլված և կնճոված ճակատի տակից կայծեր արձակելով: Այդ միջոցին ռուս ուսանողը լեհացու հետ վիճաբանում էր մարդասիրական և բարեգործական գաղափարների մասին: Դա

ժամանակակից խօսակցութեան առարկաներից մէկն էր:

Ուսանողը պնդում էր, թէ ֆիլանտրօպիան այժմեան տնտեսական անկանոն կազմակերպութեան հետևանքներից մէկն է:

Լեհացին հերքում էր նրա ասածները:

Ռուս ուսանողը խօսում էր առանձին ոգևորութեամբ, երևի, խրախուսված Ջարիֆեանի հաւանական ժսխաներով և Մելիտայի ուշադրութեամբ:

—Ո՛չ,—գոչեց յանկարծ մեր նոր սեղանակիցը, գլուխը բարձրացնելով և նայելով ուղղակի ռուսի աչքերին,—ոչ պարոն, դուք սխալվում էք: Ձեր ասածները ցնորք են և ցնորք էլ կը մնան, քանի-որ անհատի հոգին չի ենթարկվիլ արմատական յեղաշրջման, հասկանում էք, արմատական...

—Ի՞նչ էք կամենում ասել, պարոն Սանթուրեան,—հարցրեց ռուսը զարմացած: Ջարմացանք մենք բոլորս էլ և մի հարցական հայեացք ձգեցինք Սանթուրեանի վրայ:

—Ա՛յն, որ մեր հոգին է ապականված, մեր սիրտն է նեխված, և ոչ թէ մեր միտքը խաւար,—պատասխանեց նա, մի ջղային շարժումով հեռացնելով իրանից սուպի ամանը, որ աղախինը նոր էր դրել նրա առջև: Մարդկութիւնը երբէք չի հասնիլ ձեր երեակայած վիճակին, քանի-որ դիտութիւնն ու կրթութիւնը անընդունակ են

գըլել արմատից մեր կրծքի տակ թագնւած քա-
րացած ու ապականւած մնի կտորը և նրա տեղը
դնել իսկական մարդկային սիրտ: Լսեցէ՛ք, մարդ-
կային սիրտ եմ ասում... Գուք պախարակում էք
բուրժուաներին, որ գոնէ իրանց սեղանի վրջ-
րանքը ձգում են չքաւորներին: Բայց ի՞նչ կասէք
այն կրթւած և կրթւող բարբարոսների մա-
սին, որ խօսքով իսկ և իսկ ձեր պաշտպանած
գաղափարներն են քարոզում, իսկ դործով ու-
տում են իրանց բարեկամի ոչ միայն միսը, է՛է,
դա քիչ է, այլ և հոգին, հասկանո՞ւմ էք, հո-
գին: Այո՛, ուտում են, մարտում և էլի գաղա-
փարական մարդիկ համարվում: Ախ, ներեցէ՛ք,
տանտիրուհիներ, ես այսօր ախորժակ չունեմ,
ներեցէ՛ք, պարոններ...

Այս ասելով, շտապով վերկացաւ և գնաց
իւր սենեակը: Մենք նայեցինք միմեանց երեսին:
Չարիֆեանը քթի տակ ժպտաց, գլուխը շարժեց
և ինչ-որ խօսք ասաց Ադելաիդային: Իսկ ես
չբերողացայ զսպել իմ հետաքրքրութիւնը, թողի
սեղանը և գնացի Սանթուրեանի ետեւից: Մօտե-
նալով նրա դռներին, մի քանի վայրկեան տա-
տանվեցի—մտնել, թէ՞ ոչ: Մինչև այդ օրը նրա
սենեակում չէի եղել և ոչ էլ նա էր ինձ այցե-
լել: Բայց իմ ձեռը գրեթէ ակամայ երկու ան-
գամ զարկվեց դռներին, և ներսից լավեց նրա
յուզված ձայնը—, մտէ՛ք: Երբ ներս գնացի, նա
անկողնակալի վրայ լրագրի թերթերի մէջ շտա-

պով փաթաթում էր իւր ամարային վերարկուն:
—Ներեցէ՛ք, ես անքաղաքավարի վարվեցի,
ա՛խ, ներեցէ՛ք,—կրկնեց նա, իւր այլայլած
դէմքը դարձնելով ինձ:—Գուք, երևի, ինձ խե-
լագար էք համարում: Գուցէ իրաւունք ունէք:
Բայց ես շատ ուրախ եմ ձեր այցելութեանը,
ցաւում եմ միայն, որ պէտք է գնամ... Գիտէ՛ք,
գործը անյետաձգելի է, իսկ ես անսիրտս դեռ
ուզում էի ճաշել...

Նա վերջացրեց իւր գործը, հագաւ ձմերային
վերարկուն և դուրս գնաց, իւր հետ տանելով
կապոյր:

Ես, յիմարի պէս ապշած, նայում էի նրա
ետեւից:

Մի ժամ անցած, երբ հագուստով պառկած
անկողնակալիս վրայ, մտածում էի դեռ այդ
մարդու տարօրինակ վարմունքի մասին, լսեցի
իմ դռների ձայնը: Ներս մտաւ Սանթուրեանը,
և ես կանթեղի լուսով նշմարեցի, որ այժմ նրա
դէմքը հանգիստ է:

—Կրկին անգամ ներողութիւն, գնանք իմ
սենեակը՝ միասին թէյ խմելու:

Նա բարեկամաբար բռնեց իմ թևից և տա-
րաւ ինձ իւր սենեակը:

—Ես չափից դուրս վրդովված էի,—ասաց
նա, թէյ պատրաստելով,—այժմ ոչինչ, անցաւ...

—Բայց ի՞նչ էր պատահել:

—Գժբաղդութիւն, ոչ, ամարդութիւն: Մի

չատ սովորական, բայց սոսկալի տմարդութիւն, ընկերների տմարդութիւն ընկերի վերաբերմամբ: Լսեցէ՛ք, եթէ կամենում էք...

Նրա պատմածից երևաց, որ իւր ծանօթ ուսանողներից մէկը հիւանդ է: Նա համալսարանում լսում է այդ մասին, գնում է հիւանդին այցելելու: Տեսնում է, որ մարդը մենակ, անօգնական պառկած է: Ոչ բժիշկ է գալիս, ոչ դեղերի փող ունէ, նոյն իսկ թէյ-չաքարն էլ վերջացել է: Դա մի խեղճ մալարօս էր, ամենից ատված, արհամարհված: Արհամարհված այն պատճառով, որ նրա մայրը վատ ճանապարհի էր եղել և հէնց այն ժամանակ էլ էր: Նա մի անյայտ հօր դժբաղդ զաւակ էր, որ կրում էր անառակ մօր յանցանքի պատիժը:

— Երևի, ժառանգականութեան օրէնքների հիման վրայ, — գոչեց Սանթուրեանը, հետողհետէ նորից յուզվելով, — չէ որ մենք այժմ անգիր ենք անում Դարվինի թէօրիան: Երևակայեցէք, նա ամաչում է անգամ իւր ընկերների օգնութեանը դիմելու այդ նեղ վիճակում: Դժբաղդաբար, ես գրպանումս միայն յիսուն կոպէկ ունէի: Ի՞նչ կարելի էր անել: Վազեցի մէկի, միւսի, երրորդի մօտ, բոլորը մերժեցին ինձ հինգ ռուբլի տարու: Վերջապէս, դիմում եմ չորրորդին: ,,Փող չունեմ“, ասում է: Է՛հ, ինչ արած, ստիպված դուրս եմ գալիս ձեռնունայն: Սանթուրեանի վրայ հանդիպում եմ նրա աղախինն:

Կինը, մի ձեռին բռնած մի շիշ թանկագին խմիչք, միւս ձեռի ատում սեղմած մի բուռն թղթագրամ, դիմում է նրա սենեակը: Մի չար միտք ինձ թելադրում է հարցնել աղախինն: Բանից երևում է, որ մեր փող չունեցող պարօնը, իւր ընկերներին այս երեկոյ կասիտով հիւրասիրելու համար, քսանուհնգանոց է ուղարկել խմիչքների խանութը... Ահա ինչեր են պատահում: Իսկ այդ ուսանողը միշտ բարձր բաների մասին է խօսում: Օ՛, զգվում եմ միանգամայն այդ խօսքերից, ահա ինչու այսօր այնքան կոպիտ պատասխանեցի մեր սեղանակցին...

Նրա խօսքերի մէջ զգացվում էր մի անկեղծ հոգու բնական վրդովմունք:

— Ի՞նչո՞ւ ինձ չը դիմեցիք, ես փող ունէի, — ասացի ես:

— Ա, ու այժմ կարիք չը կայ, ես նրա համար փող գտայ...

Հարկաւոր չէր հարցնել իմանալու համար, թէ Սանթուրեանը որտեղից էր փող ճարել: Նա անշուշտ գրաւ էր դրել իւր ամարային վերարկուն:

Այդ երեկոյ երկար ժամանակ մնացի նրա մօտ և բաւական ծանօթացայ նրա հայեացքներին: Չը նայելով իւր տարիքին, նա անհամեմատ աւելի զարգացած էր, աւելի շատ կարգացած և իւր կարգացածը լաւ ըմբռնած, քան բոլոր իմ ծանօթ ուսանողները: Խօսում էր լուրջ

բաների մասին: Երբեմն նրա միտքը այնպիսի թռիչքներ էր գործում, որ ես հազիւ կարողանում էի երևակայութեամբ հասնել նրան: Նրա ոչ մի դատողութիւնը սովորական չէր, ոչ մի դարձուած անգամ չէր արտասանում այնպէս, ինչպէս ուրիշները:

Նա զգայուն էր և անշարի զգայուն: Նրան վրդովեցնում էր մարդկանց անտարբերութիւնը դէպի հալածվածները, չքաւորները, խեղճները: Եւ այդ մասին խօսելիս աւելի էր յուզվում, գունատվում, նրա ձայնը աւելի էր դողում: Իսկ աչքերը—կրակի այդ անսպառ աղբիւրը—շարունակ կայծեր էին արձակում:

Ոչ, ես այդ տեսակ շարժուն դէմք կեանքումն է՛լ չեմ տեսել: Մարդը, կարծես, ամբողջովին բաղկացած էր ներվերից և այն էլ բաց ներվերից:

Այնուհետեւ ես երբեմն գնում էի նրա սենեակը կամ ինքն էր գալիս ինձ մօտ: Նա խօսում էր ամեն բանի մասին, բացի մէկից— իւր անձնաւորութեան և ընտանեկան վիճակի: Իսկ ես, հարկաւ, այդ մասին չէի հարցնում: Միայն ինձ թւում էր, որ նրա ազգանունը ինձ ծանօթ է, որ ես մի տեղ լսել եմ թէ կարդացել նրա մասին մի պատմութիւն:

Ես սիրեցի նրան: Սիրում էր արդեօք նա էլ ինձ—չը գիտէի: Զգում էի միայն, որ իմ այցելութիւնները նրան չեն ձանձրացնում: Մեր սե-

նեակները միմեանցից բաժանված էին Զարիֆեանի սենեակով: Երբեմն Սանթուրեանի ձայնը լսում էի իմ հարեանի մօտից: Շուտով նկատեցի, որ Զարիֆեանը արդէն գրաւել է նրա համակրութիւնը...

Մելիտան պսակվեց և իւր ամուսնի հետ տեղափոխվեց Օդեսսա: Մեր սեղանի միակ զարդմանց Ադելաիդան: Զարիֆեանը սկսեց աւելի հետամուտ լինել նրան: Թէ ինչ ունէր իւր սրտում—այդ դժուար էր իմանալ նրա նման մի գաղտնապահ և խորամանկ մարդուց: Միայն այդ երիտասարդի յարաբերութիւնը դէպի օրիորդը ինձ դիւր չէր գալիս, ինչպէս և նա ինքն առ հասարակ: Երբեմն նկատում էի, որ օրիորդի հետ խօսելիս, նրա քծնող աչքերի մէջ փայլում է վավաշտութիւն: Ըշմարիտ է, Ադելաիդան խոյս չէր տալիս նրա քաղցր և խորհրդաւոր ժպիտներից, բայց նկատում էի, որ աչքի տակով դիտում է Սանթուրեանին և աւելի ուշադիր է դէպի նա: Մինչդեռ ամեն բանի վերաբերմամբ զգայուն երիտասարդը տակաւին անտարբեր էր նայում սիրուն օրիորդին:

Իմ բարեկամութիւնը Սանթուրեանի հետ օրից օր դառնում էր մտերմական, բայց նրա ընտանեկան կեանքը ինձ համար դեռ ևս անթափանցելի էր:

Այն ուսանողը, որին օգնելու համար նա գրաւ էր գրել իւր վերարկուն, թորախտ ունէր,

4104 / 4011
3/10-2003



չուտով մեռաւ: Նրա թաղման օրը Սանթուրեանը առաւօտ կանուխ ինձ զարթեցրեց և խնդրեց տալ տասնուհինգ րուբլի ձեռագարտ: Բարեբաղդաբար, մօտս փող կար, տուեցի: Նա խելագարի պէս դուրս թռաւ, շտապով յայտնելով այն հիւանդանոցի տեղը, ուր խեղճ ուսանողին փոխադրել էին վերջին ամիս:

Այդ օրը ինձ համար կը մնայ անմոռանալի: Ես գնում էի հանգուցեալի դագաղի ետեից տասի չափ աղքատ ուսանողների հետ: Ներկայ էր և Զարիֆեանը: Նա իւր դէմքին տուել էր հանդիսին վայել տխուր, միայն իմ կարծիքով կեղծ արտայայտութիւն: Բայց, Աստուած իմ, այն ի՞նչ վիճակի մէջ էր Սանթուրեանը: Նրբէք մի հանգուցեալի դագաղի ետևում ես չէի տեսել այդքան ճնշված, ընկճված, վշտալի կերպարանք: Թաղման հոգսերը նա իւր վրայ էր առել: Եւ հեռաւոր Կովկասից եկած մարդը մի օտարազգի ուսանողի դագաղին հետևում էր այն վիճակում որի մէջ գուցէ միայն հարազատ մայրը կարող էր լինել:

— Ի՞նչ կապ կար նրանց մէջ, — հարցրի ես մի ուսանողից:

— Ոչինչ, նրանք միեւնոյն ֆակուլտետի ուսանողներ էին, ահա բոլորը, — պատասխանեց նա:

Դիակառքը հասաւ գերեզմանատան: Միակ քահանան և միակ տիրացուն կատարեցին վերջին կարգը: Այն բոպէին, երբ շորս զոյգ բիրտ

ձեռներ ուղում էին դագաղը իջեցնել գերեզման, Սանթուրեանը բանւորներին ձեռով նշան տուեց սպասել:

Նա կանգնած էր գերեզմանից հանած թարմ հողի բարձրութեան վրայ, դագաղի ոտքի կողմում: Նրա այտերը և ականջները ցրտից կապտել էին, չրթունքները դողում էին, ատամները զարկվում միմեանց, իսկ աչքերը դարձեալ կրակ էին արձակում:

Չեռի մի ջղային շարժումով նա յետ ձգեց իւր լայն ճակատի վրայ սփռված դանդուր մազերը: Նա սկսեց խօսել: Սկզբում նրա ձայնը երերվում էր, չրթունքները ցրտից անզօր էին՝ արտայայտել խօսքերը: Բայց այս տևեց միայն մի քանի վայրկեան: Նա յաղթեց ցրտին, զսպեց իւր ներքին յուզմունքը, ձայնը բարձրացրեց:

Նրբէք ես չէի լսել մարդկային խօսքը բղխած սրտի այդ անհուն խորութիւնից: Դա դամբանական չէր, պարոններ, այլ մի ամբողջ ողբերգութիւն: Նա մռայլ գոյներով նկարագրում էր հանգուցեալի բարոյական վիճակը, պատկերացնում էր նրա դէրքը ընկերների չրջանում: Ամբողջ ժամանակ խեղճը ենթարկված է եղել մի խուլ և անլուր արհամարհանքի: Իբրև զգայուն և հիւանդ մարդ նա չէ կարողացել սառնարիւն տանել այդ արհամարհանքը և օր օրի վրայ ընկճվել է նրա ծանրութեան ներքոյ: Եւ ի՞նչ է եղել նրա յանցանքը: — Միայն իւր մօր մոլորութիւնը, որ բե-

րանից բերան պատմվելով, յայտնի է եղել ամբողջ համալսարանին:

Դա էր Սանթուրեանի դամբանականի միտքը: Եւ նա, այդ կենդանի փաստը հիմք վերցրած, տրժարծում էր մի ամբողջ գաղափար անհատի և շրջանի մասին: Նա մի բարբարոսական զոհ էր համարում հանգուցեալին, զոհ մարդկային եսամոլութեանը, գոռոզութեանը, կեղծ պատուասիրութեանը: Նրա ձայնը ցրտից թանձրացած օդի մէջ այժմ արձակում էր երկաթային սուր հնչիւններ, այլ ևս չէր դողդողում, չէր խեղդվում կողորդում: Նա թւում էր ամբողջովին մի կենդանի և սոսկալի բողոք ընկերների անիրաւութեան դէմ: Ա՛խ, որքան ցաւում եմ, որ նկարիչ չեմ: Այդ պահին նա այնքան գեղեցիկ էր, գրաւիչ և ազդու իւր կերպարանքով, որ կարող էր ողևորութիւն ներշնչել մի հանճարեղ վրձինի:

Ամենքը զգացվեցին: Իմ հոգուն տիրել էր մի անսովոր ջերմութիւն: Յուրտը ինձ համար անզգալի էր դարձել, ես ամբողջովին յափշտակվել էի Սանթուրեանի վառվռուն խօսքերով և նրանց խոր իմաստով:

— Տէր Աստուած, ո՛րքան պերճախօս է, ո՛րքան կրակ կայ այդ մարդու սրտում և ո՛րքան ոյժ նրա ձայնի մէջ,—մտածում էի ես:

Ես արտասովեցի, նաև մի քանի ուրիշները, բայց ոչ Ջարիֆեանը:

Հանդէսը վերջացաւ և մենք, Սանթուրեանի

խօսքերի խորին տպաւորութեան տակ, վերադառնում էինք տուն:

—Դուք կարող էք պարծենալ ձեր հայրենակցով, նա տաղանդ է, —ասաց ինձ մի լեհացի ուսանող:

Այո՛, պարոններ, ես անկեղծ պարծենում էի իմ հայրենակցով: Եթէ նա իւր դամբանականը գրէր—մի սքանչելի էպօպէա դուրս կը գար, եթէ արտասանէր մի մեծ հանդիսում—հազարաւոր քարացած սրտեր կը շարժէր: Նա տաղանդ էր և անխառն, ինքնուրոյն տաղանդ:

—Լաւ խօսեց մեր հայրենակիցը, բայց խօսողը նա չըպիտի լինէր,—դարձաւ ինձ Ջարիֆեանը:

—Ինչո՞ւ նա չըպիտի լինէր:

—Այստեղ գրեթէ բոլորը գիտեն նրա հօր պատմութիւնը:

—Ի՞նչ պատմութիւն, ի՞նչ էք ասում,—գոչեցի ես հետաքրքրված:

—Է՛հ, ուրեմն ձեզ յայտնի չէ: Նրա հայրը բանդումն է, ո՛վ գիտէ, գուցէ շուտով արտորվի...

—Ի՞նչ յանցանքի համար:

—Կարծես, կովկասցի չէք և հայ: Միթէ չէ՞ք կարդացել Սարգիս Սանթուրեանի դատը իւր ապահոված տունը կրակ գցելու մասին: Այդ դատը ահագին ազմուկ հանեց: Նրա մասին գրեցին նոյն իսկ այստեղի և Պետերբուրգի մեծ լրագիրները:

Ահա ինչ: Ես մտաբերեցի, թէ ինչու Սանթուրեան ազգանունը ինձ ծանօթ էր թուում: Արդարև, այդ դատը աղմուկ էր հանել: Մի քանի հրապարակախօսներ Սարգիս Սանթուրեանին ցոյց էին տուել իբրև ազգային ընդհանուր տիպար և այս հիման վրայ յարձակողական յօդուածներ գրել ամբողջ հայ ազգի դէմ: Սանթուրեան ազգանունը դարձել էր նախատական հայերի մէջ, մանաւանդ «ազգասէրների» շրջանում:

Զարիֆեանի խօսքերի մէջ ես զգացի մի տեսակ սատանայութիւն: Բայց եթէ նա, մեր ընկերոջ ընտանեկան տխուր պատմութիւնն ինձ յիշեցնելով, ուզում էր իմ մէջ արհամարհանք զարթեցնել—չարաչար սխալում էր: Ես այնուհետև սկսեցի աւելի սիրել Սանթուրեանին:

Այժմ ես այցելում էի նրան գրեթէ ամեն օր և միշտ զբաղված էի գտնում: Նա իսկոյն գործը թողնում էր և սկսում ինձ հետ զրուցել:

Հազիւ էր պատահում, որ նա հոգով քիչ թէ շատ անվրդով լինէր, միշտ յուզված, միշտ շփոթված էր: Ամեն մի անարդարութիւն, թէ՛ առհասարակ կեանքի մէջ և թէ՛ ընկերների շրջանում, պղտորում էր նրա սիրտը: Իսկ անարդարութիւններ շատ էր տեսնում և միշտ հանդիսանում էր պաշտպան հարստահարվածին, զրկվածին, թոյլին և խեղճին: Մի անգամ ինձ մօտ կարգաց, թէ ինչպէս Խարկովում մի կին տանջել է իւր խորթ աղջկան և սպանել, և սկսեց երեխայի պէս հեկեկալ:

Նա չէր խօսում միայն իւր հօր մասին, և այս հանգամանքը ինձ թուում էր միակ սև գիծը նրա անհերքելի ազնուութեան մէջ:

Շուտով ես իմացայ, որ նրա հայրենակից ուսանողներից շատերը աշխատում են խոյս տալ նրանից անպատված և ապականված համարելով Սանթուրեան ազգանունը: Եւ ոմանք այդ համարում էին հայրենասիրութիւն: Թող, ասում էին, օտարները հասկանան, որ մենք էլ գիտենք պատժել մեր հասարակութեան մէջ երևացող ախտերը:

—Նա ինքը վատ տղայ չէ, բայց շատ է պաշտպանում իւր հօրը,—ասում էր մէկը:—Նա ազգային հպարտութիւն չունէ:

—Եթէ նա լաւ մտածէր, վաղուց հրաժարված կը լինէր իւր հօրից,—ասում էր միւսը:

—Նա ինքը առաջինը պէտք է ապտակէր նրան,—գոռում էին աւելի արմատականները:

Ապտակել հարազատ հօ՛րը: Օ՛, երիտասարդութիւն, երիտասարդութիւն: Բարոյականութեան այդ անողոք ասպետներից շատերը այժմ կեանքի մէջ են: Եւ ի՞նչ, դեռ երէկ նրանցից մէկին տեսայ դատարանում փրփուրը բերանին մի բանկ կողոպտած պարոնի պաշտպանելիս:

Ես նկատում էի, որ ընկերների այդ խիստ վարմունքը ազգում է Սանթուրեանի վրայ, և ազգում է շատ ծանր: Նա այնքան ինքնասիրութիւն ունէր, որ ինքն էր խոյս տալիս ամենից, ոչ ոքի չէր այցելում, և ոչ ոքի էլ չէր ուզում

ընդունել իւր մօտ: Միայն Ձարիֆեանը նրա հետ գէթ արտաքուստ բարեկամութիւն ունէր: Այդ մարդը քանի քանի անգամ իմ ներկայութեամբ օգտուել էր Սանթուրեանի բարեկամութիւնից: Մինչդեռ ես մի անգամ չը տեսայ, որ նա գէթ ամենաթոյլ կերպով պաշտպանէր Սանթուրեանին իւր ընկերների մօտ:

Մի անգամ, իրիկնադէմին, մտնելով Սանթուրեանի սենեակը, տեսայ, որ նա, գլուխը սեղանի վրայ դրած, հեկեկում է: Ես շփոթվեցի, կամեցայ յետ դառնալ: Բայց նա արդէն լսել էր իմ քայլերի ձայնը, յետ նայեց, և ես մնացի սենեակում: Նա շտապով սրբեց աչքերը և ոտքի կանգնեց:

— Ներեցէք տարածամ այցելութեանս համար, — ասացի ես:

— Օօ, ոչ, տարածամ չէ, ուրախ եմ, որ եկաք: Նստեցէք, խնդրեմ, ոչի՛նչ, մի քիչ յուզված էի, ինձ հետ շատ է պատահում:

Այո՛, շատ էր պատահում, բայց ին՛չ էր այս անգամ առիթը: Ես կամեցայ անպատճառիմանալ նա միայնակ էր, դրեթէ բոլորովին միայնակ, օտար երկրում, օտար չրջանում, և ես անկեղծ կամենում էի նրան սփոփել:

— Ատում եմ կեանքը, — գոչեց նա, արագ անցուդարձ անելով սենեակում, — մարդիկ չար են, չափազանց չար: Ին՛չ ենք արել, որ մեզ հալածում են... Միթէ մեղաւո՞ր ենք, որ

սիրում ենք մեր հօրը... Միթէ դատաւորները ամենագէտ են, անսխալ, և երբէք անարդար վճիռներ չեն սպրտում նրանց արդարամիտ հայեացքից... Ես ճանաչում էի իմ հօր սիրտը: Նա ինձ սիրում էր... Նա պաշտում էր իւր ընտանիքը: Եթէ մի մեղք գործել է, գիտեմ միայն և միայն իւր ընտանիքի բարօրութեան համար է գործել: Բայց ո՛չ, նա մեղաւոր չէ, հաւատացէք: Իմ սիրտը երբէք չի կարող հաշտվել այդ մտքի հետ... Էէ, բայց թող լինէր ամենավերջին յանցաւորը, դարձեալ ես չէի կարող դուրս ձգել իմ սրտից որդիական սէրը... Մեղադրեցէք ընտթեանը, որ այս խորը անբացատրելի զգայումը դրել է իմ սրտի մէջ: Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ոչ, իմ հայրը պէտք է արդար լինի, որովհետեւ նա միշտ ազնիւ է եղել: Ինչո՞ւ է նա պատժվում, ինչո՞ւ են մեզ պատժում... Ահա, կարգացէ՛ք, ձեզ կարելի է հաւատալ...:

Այս ասելով, նա ձգեց իմ առջև մի նամակ: Ես կարգացի: Նամակը գրում էր Սանթուրեանի փոքր եղբայրը, որ գիմնադիստ էր: Այնտեղ նկարագրված էր ընտանիքի վիճակը, հասարակութեան խուլ արհամարհանքը գէպի նա: Գիմնադիստը գանգատվում էր իւր ընկերների վրայ, որոնք նրան ամեն քայլում յիշեցնում էին հօր դատը, սրախօսում, ծաղրում... Ազգականներից շատերը երես էին դարձրել նրանցից:

Բայց կար մի հանգամանք, որ ամենից ա-

ւելի էր յուզել Սանթուրեանին: Նրա քոյրը արդէն նշանված է եղել մի երիտասարդի հետ, երբ հօր դատը բացվել է: Փեսացուն սկզբում ուշադրութիւն չի դարձրել և մտադիր է եղել, դատը վերջանալուց յետոյ, իսկոյն ամուսնանալ: Գատը ձգձգվել է և, վերջապէս, առաջին դատարանում վճռվել է տխուր: Փեսացուն սկսել է օրից օր հարսանիքը յետաձգել: Այժմ նա, իւր ազգականների դրդմամբ, բոլորովին հրաժարվում է հարսնացուից:

— Գիտէ՞ք, այդ ինչ է նշանակում,— ասաց Սանթուրեանը.— նշանակում է, որ իմ խեղճ քոյրը պիտի տանջվէ վշտից և, ով գիտէ, ինչ հետևանք ունենայ նրա տանջանքը: Նա սիրում է իւր թուլամորթ փեսացուին:

Ինձ մնում էր, պարոններ, գործ դնել իմ բոլոր պերճախօսութիւնը նրան մխիթարելու համար:

— Գուցէ դուք էլ էք ձեր սրտի խորքում ինձ մեղադրում,— շարունակեց նա, հետզհետէ հանգստանալով,— որ այսքան կողմնապահ եմ իմ հօր վերաբերմամբ: Գուցէ մտածում էք. «ահա մի մարդ, որ ամենափոքր անարդարութեան դէմ բողոքում է, իւր հօրը վերաբերվում է ներողամտաբար»: Իրաւունք ունէք այդպէս մտածելու, այդ բնական է: Բայց նախ, ինձ համոզեցէք, որ իմ հայրը յանցաւոր է, երկրորդ, ցոյց տուէք ծնողին ատելու միջոց: Ասացէք, ի՞նչպէս

սառնարիւն մնամ, երբ տեսնում եմ ամենը դատապարտում են նրան, դուցէ նոյն իսկ իսկական յանցաւորները: Լսեցէ՛ք, ես ձեզ մի բան ասեմ: Աստծուն է յայտնի, եթէ դատապարտվածը լինէր բոլորովին օտար և անծանօթ մի մարդ, է՛լի ես նրան չէի մեղադրիլ հէնց միայն այն պատճառով, որ բոլորը նրան մեղադրում են: Գիտէ՞ք ինչու: Որովհետև իմ մէջ կայ մի բան, որ միշտ ինձ դրդում է ընդհանուրի դէմ զնայ, չենթարկվել ուրիշների կարծիքին: Ես ասում եմ ոչխարային ինստիտուտները: Հասկացէ՛ք, ինչպէս կամենաք...

Նա չէր կեղծում: Արդարև, շատ անգամ նա անում էր այն, ինչ-որ հակառակ էր ընկերների կարծիքին: Նա սեղմում էր այնպիսիների ձեռք, որոնք այս կամ այն պատճառով արհամարհված էին: Եւ ես նկատում էի, որ այս հանգամանքը անհամեմատ աւելի է գրգռում ուսանողներին, քան նրա ազգանուան արատը: Ինձ թւում էր, որ շատերն են իրանց սրտի խորքում յարգում նրան, թէև արտաքուստ ցոյց են տալիս ատելութիւն և թէ նա ինքը շատերին արհամարհում է և այդպիսով գրգռում նրանց իւր դէմ: Նա ոչ ոքից չէր թազցնում իւր իսկական զգացումներն ու կարծիքները: Նա ամենի երեսին ասում էր ա՛յն, ինչ-որ մտածում էր: Եւ այդ ոչ ոքի դիւր չէր գալիս:

— Նա ծաղրում է մեզ, չի ուզում ենթարկվել

մեր ընկերական շրջանի սկզբունքներին, — ասում էին շատ ուսանողներ:

Մի կիրակի առաւօտ ես մտայ Սանթուրեանի մօտ մի գիրք խնդրելու: Նա, կուրծքը սեղանին սեղմած, շտապով գրում էր: Ինձ տեսնելով, նա ձեռագիրը արհամարհանքով չաբտեց մի կողմ: Արդէն մենք այնքան մտերմացել էինք, որ խօսում էինք «գու»-ով:

— Ինչ էիր գրում, — հարցրի ես:

— Յիմար բան:

Ես հեռուից նայեցի ձեռագրին, և իմ հետաքրքրութիւնը շարժվեց: Դա ոտանաւոր էր. մի բան, որ ես իսկի չէի սպասում Սանթուրեանից: Ես ձեռս մեկնեցի թուղթը վերցնելու. նա բռնեց իմ թեւը, ասելով.

— Սպասիր, եթէ ուզում ես, կը տամ աւարտածները, կարգն և ծիծաղիր...

Նա սեղանի դարանից հանեց մի քառածալ տետր կարմիր փաթեթի մէջ: Տետրի ճակատին խոշոր տառերով գրված էր «Կրակ»: Դա նրա վերնագիրն էր: Ես կարդացի մի քանի տող բարձր ձայնով, բայց նա, ականջները փակելով, երեսը դարձրեց և խնդրեց, որ մտքումս կարդամ: Կարդացի մի ընդարձակ ոտանաւոր, յետոյ մի ուրիշը, երրորդը, չորրորդը: Ասում են — ճաշակները տարբեր են լինում: գուցէ իմ ճաշակը ամենաանկիրթներից է կամ փչացած, բայց ես մինչև այսօր էլ յիշում եմ, որ այն օրը առաջին ան-

գամ յուզվեցի, մի հայերէն գրուած կարդալով: Դա վշտացած հոգու մի բուռն և անզուսպ բողոք էր հասարակական եսամոլութեան դէմ: Դա մի թանձր և մահաբեր թոյն էր, որ ժայթքում էր մի տառապող սիրտ: Հուրը այրվում էր անհատի ներսում, և անհատը, ինքն իրան ուտելով, ոչնչանում: Որքա՜ն զգացմունքի խորութիւն, հոգեբանական նրբութիւն, պատկերների կենդանութիւն, զայրոյթ և կատաղութիւն կար այդ ոտանաւորների մէջ:

Ես յուզվեցի և հիացած նայում էի նրա հեղինակին: «Մհա, ուրեմն, ինչու՞մն է կայանում քո տաղանդը», մտածում էի ես, նայելով նրա մեղամաղձոտ դէմքին:

— Ե՞րբ պիտի հրատարակես, — ասացի ես:

— Հրատարակե՞լ, — կրկնեց նա, — երբէ՛ք:

— Ինչո՞ւ:

— Մի՞թէ ամեն մի խղբզանք կարելի՞ է հրատարակել:

— Բայց դա խղբզանք չէ: Ոչ, Սանթուրեան, դու, իմ կարծիքով, տաղանդ ես, և խոշոր տաղանդ:

— Հեշտ մի՛ արտասանիլ այդ բառը, — ասաց նա, գլուխը հեզնաբար շարժելով և քնթի տակ ծիծաղելով: — Տաղա՛նդ, չէ՛, հանճար... Ես գրել եմ ինձ համար, ինչ իրաւունք ունեմ իմ սեպհական զգացումները ուրիշների վրին փաթաթելու: Երբեմն ճիգ եմ անում այդ խղբզանք-

ներով զսպել իմ սրտի կրակը, ահա ինչու վերնագիրը այդքան խոշոր է: Տո՛ւր ինձ, բաւական է...

Նա գրեթէ ուժով խլեց ինձանից տետրը և, կողպելով սեղանի մէջ, աւելացրեց.

— Առաջին և վերջին անգամ հանեցի սեղանիս միջից, թող այնտեղ փախ...

Ախ, որքա՛ն ցաւում եմ, որ մի օր գաղտնի չըմտայ սենեակը և չըզողացայ նրա «կրակը»: Գուցէ սխալվում եմ, գուցէ յափշտակված էի, բայց համոզված եմ, որ այդ կրակը գէթ մի փոքրիկ հրդեհ կը գցէր մեր սառն և անարիւն գրականութեան մէջ, իսկ ես անյայտութեան խաւարից կ'ազատէի մի փայլուն անուն...

Երբեմն Սանթուրեանի մօտ հանդիպում էի Զարիֆեանին: Չը նայելով իմ հակակրանքին, կարողանում էի նրա հետ խօսել, միայն այն պատճառով, որ շատ էի սիրում Սանթուրեանին: Նրանց յարաբերութեան մէջ ես զգում էի մի կողմից—անկեղծութիւն, պարզութիւն, միւս կողմից—կեղծիք և շինծու քաղաքավարութիւն:

Զարիֆեանը զգում էր Սանթուրեանի մտաւոր գերազանցութիւնը և նախանձում, միայն գիտէր թազցնել իւր նախանձը: Իսկ Սանթուրեանը երբէք չէր աշխատում ճանաչել նրա ներքին աշխարհը և վերաբերվում էր իբրև մի անկեղծ բարեկամի, քննադատում էր նրա մօտ և շատ անգամ պախարակում կովկասցի ուսա-

նողների մտաւոր և բարոյական հայեացքները: Իսկ ես համոզված էի, որ Զարիֆեանը նրա բոլոր ասածները հաղորդում էր ուսանողներին:

Ճաշի միջոցներին նկատում էի, որ Զարիֆեանը արդէն չափից դուրս է հետամուտ Ադելաիդային: Իմ մէջ վաղուց էր կասկած յղացել և գուշակում էի, որ մի բան է պատրաստվում և ոչ-լաւ բան: Մի օր ուուս ուսանողն ինձ ասաց, թէ իմ հայրենակիցը սիրահարվել է գերմանուհու վրայ: Ճիշտ էր այդ թէ ոչ—չը գիտէի, բայց ես Զարիֆեանի սիրտը անընդունակ էի համարում սիրոյ զգացմանը: Այն մարդը, որ իւր փողկապն էլ հաշուով է կապում, չի կարող սիրահարվել:

Իմ ճանապարհը Ադելաիդայի սենեակի առջևով էր: Երբեմն, տնից դուրս գալիս կամ տուն վերադառնալիս, ես այնտեղից լսում էի Զարիֆեանի սառն, միատեսակ հնչող ձայնը և չափաւոր ծիծաղը: Եւ ես իմ մտքում վրդովվում էի Ադելաիդայի դէմ, որ թոյլ էր տալիս այդ մարդուն հետամուտ լինել իրան: Վերջապէս, մի օր դէպի Զարիֆեանը տածած խուլ հակակրանքի զգացումը իմ մէջ մի փոքր դուրսացում ստացաւ:

Դա Ադելաիդայի ծննդեան տարեդարձի օրն էր: Լրանում էր նրա քսան տարին: Նախընթաց երեկոյեան նա մեզ հրաւիրել էր չօկօլադ խմելու: Մենք շնորհաւորեցինք նրան մի մի

նուէրով: Զարիֆեանը գնել էր մի շքեղ մետաքսեայ հովանոց. մի բան, որ անսպասելի էր նրա նման ժլատից: Սանթուրեանը բերեց մի փղոսկրեայ քնարիկ: Դա մի հասարակ, բայց ճաշակով շինած քորոց էր կրծքի համար:

Օրիորդը մեր նուէրները դրել էր առանձին սեղանի վրայ և պարծանքով ցոյց էր տալիս իւր ընկերուհիներին, որ եկել էին շնորհաւորելու: Առանց քաշվելու նա մի առանձին հաճոյքով մատնացոյց էր անում Սանթուրեանի նուէրը, որ գուցէ բոլոր նուէրներից էթանագինն էր:

— Ախ ի՞նչ գեղեցիկ է, ի՞նչ գեղեցիկ է, — կրկնում էր նա անդադար, — երևում է, որ նուիրողը ճաշակով մարդ է...

Սանթուրեանը երբեմն նայում էր օրիորդին, երբեմն ինձ և ամաչելով գլուխը թեքում կրծքին: Պէտք է ասել, որ մի շաբաթ էր արդէն նա ուշադիր էր դէպի օրիորդը: Պարզ էր, որ այդ կարճ միջոցում նա աւելի էր գրաւել նրան, քան Զարիֆեանը ամիսների ընթացքում: Երկու օր առաջ նա ինձ մօտ առաջին անգամ խօսեց Ադելաիդայի մասին: Նրա հատուկտոր խօսքերից իմացայ, որ հաւանում է գերմանուհուն, մանաւանդ նրա աշխոյժ և ուրախ բնավորութիւնը:

Ադելաիդան անվերջ հրճվում էր Սանթուրեանի նուէրով, ստէպ ստէպ ժպտալով նրա երեսին: Պէտք էր տեսնել Զարիֆեանին: Ներքին յուզմունքից նա անդադար կրճոտում էր իւր շրթուները

ները բեղերը շարունակ ոլորում և մատներով ձգձգում իւր բաց—շագանակագոյն միրուքը: Նա աչքերով ուտում էր Ադելաիդային և աշխատում էր անուշադիր լինել դէպի Սանթուրեանը: Ինձ համար պարզ էր, որ նա չարաչար նախանձում է:

Բայց, պարոններ, առաջին և վերջին անգամ ես նկատեցի այդ նախանձը... Սյնուհետև Զարիֆեանի զգացումները անթափանցելի էին ինձ համար...

Հեռուեալ օրը Սանթուրեանը ինձ բարեկամաբար խոստովանեց, որ անտարբեր չէ դէպի Ադելաիդան: Այդ օրից յետոյ նա երբեմն գնում էր օրիորդի սենեակը: Նրանք միասին կարդում էին գրքեր: Թէ ինչ էին խօսում, հարկաւ, չը գիտէի: Բայց, ճանաչելով Սանթուրեանին, գուշակում էի, որ եթէ մի անգամ սիրոյ զգացումը նրա սրտում գէթ մի թոյլ արմատ է գցել, պէտք է աճի, զարգանայ այնքան արագ, որ քան արագ յղանում էր և զարգանում նրա մէջ ամեն մի զգացում: Ես չէի ուզում նրան խանգարել, խլել նրա երջանիկ ժամերը, ուստի առաջուայ պէս յաճախ չէի այցելում նրան: Բայց նա ինձ յանդիմանում էր այդ մասին և, երբ ես չէի գնում նրա մօտ, ինքն էր գալիս իմ սենեակը:

Սիրոյ զգացումը տակաւին չէր գրաւել նրա ներքին կրակը: Նա նոյն գրգռվող, վրդովվող և անարդարութիւնների դէմ բողոքող Սանթուրեանն էր: Նա նոյնչափ անողոր էր դէպի մարդկային

սառնասրտութիւնը, եսամոլութիւնը, նոյնչափ զգայուն դէպի խեղճը, աղքատը, անանկը և հալածվածը: Նա ծախսում էր իւր վերջին կոպէկը, գրաւ էր դնում ամեն ինչ, որ կարելի է գրաւ դնել, և նպաստում էր չքաւոր ուսանողներին, միւսնոյնն է ուղբեր էլ լինէին և ինչ աչքով էլ նայէին նրան այդ մարդիկ: Մի անգամ Զարիֆեանը հաղորդեց, թէ մի բժիշկ ուսանող չի կարողանում իւր այդ տարուայ ուսումնաւարձը վճարել: Սանթուրեանը նոր էր անից փող ստացել և այն օրը վճարել սենեակի ու ճաշի վարձը: Նա անմիջապէս իւր գրպանները դատարկեց սեղանի վրայ: Գոյացաւ տասնութ ռուբլի և մի քանի կոպէկ:

— Ահա իմ մասը, մնացեալն էլ ուրիշից առէք, — ասաց նա, ուղղելով փողերը Զարիֆեանի կողմ:

— Վաղը ինքներդ կը տաք իրան, — ասաց Զարիֆեանը:

— Ո՛չ, նա ինձանից չի վերցնի: Մի անգամ նա մի պսակի համար փող էր ժողովում, ես կամեցայ իմ բաժինը տալ, նա չընդունեց: „Չի կարելի, ասաց, ձեր փողերը խառնել ուսանողական փողերի հետ:“ Տուէ՛ք իրան ձեր կողմից, ինձանից չի վերցնի, բայց չասէք, թէ ես եմ տալիս: Դա իմ մայրական փողերից է, հաւատացէ՛ք... ”

Եւ նա, իւր չրթունքները կրճատելով, հաղիւ կարողացաւ զսպել արտասուքը:

Յիշում եմ այն օրը, երբ ուսանողները մի երեկոյթով պէտք է պատուէին կովկասից եկած

մի յայտնի մարդու: Մեծամասնութիւնը կամեցաւ զանցառութեան տալ Սանթուրեանին: Ես և մի քանի ուրիշները բողոքեցինք և կարողացանք ստիպել նրանց՝ արդարացի լինել իրանց ընկերոջ վերաբերմամբ: Ուսանողները համաձայնվեցին հրաւիրել Սանթուրեանին, չընայելով շատերի ընդդիմութեան: Իսկապէս այդ ընդդիմութեան պատճառը Սանթուրեանի ազգանունն արատը չէր, այլ նրա մտաւոր առաւելութիւնը, որ կարող էր նրանց նսեմացնել կովկասցի հիւրի մօտ: Ուսանողները զգում էին Սանթուրեանի գերազանցութիւնը, ահա նրանց հալածանքի գլխաւոր հոգեբանական պատճառը, որ ես պարզ հասկանում էի և զգում: Զարիֆեանը, որ միշտ մի առանձին ախորժակով էր պատմում ամեն մի չար լուր, շտապել էր Սանթուրեանին հաղորդել այն բոլոր վիճաբանութիւնները, որ տեղի էին ունեցել նրա առիթով: Ես այդ չը գիտէի, եկայ նրան հրաւերելու, և ի՞նչ դրութեան մէջ գտայ: Զգայուն երիտասարդը պառկած էր անկողնում հագուստով: Նրա աչքերն այրվում էին, կուրծքը ուժգին բաբախում, դժուարութեամբ էր շունչ քաշում, այնքան ազդել էր այս անգամ նրա վրայ ընկերների խստութիւնը:

— Հանգստացի՛ր, Մարգար, հանգստացի՛ր, — ասացի ես, իսկոյն զգալով բանի էութիւնը, — հաւատացի՛ր, չարժէ այդքան զգայուն լինել դէպի ամեն բան:

— Դէպի ամեն բան, — գոչեց նա, գլուխը բարձրացնելով և մի կրակոտ հայեացք ձգելով ինձ վրայ, — դէպի ամեն բան, նոյն իսկ դէպի մի այդպիսի ապտա՞կ: Այո՛, չարժէ, չարժէ, որովհետև ես եմ մեղաւորը, ես եմ առիթ տալիս ինձ հաւածելու, ես, որ չեմ կարողանում հաշտվել ոչ ոքի հետ:

Եւ նա սկսեց խեղդված ձայնով հեկեկալ, գլուխը թաղելով բարձի մէջ: Ես չէի խղճում նրան, այլ ցաւակցում էի: Խղճում են թոյլերին, իսկ նա թոյլ չէր, այլ զգայուն, պարզախօս, անկեղծ: Եւ հէնց այդ պարզախօսութիւնն ու անկեղծութիւնն էին նրա անբաղդութեան հիմքը:

Վերջին ժամանակ նրա դժբաղդ հօր մասին Թիֆլիսի մի լրագրում երևացել էր մի կոպիտ ֆէլիետօն: Ուսանողները կարգում էին և ծիծաղում: Կարգաց նա ինքն էլ, և կրակը սկսեց մի նոր ուժով լսփել նրա ներսը: Ես ամեն կերպ աշխատում էի թեթևացնել նրա վիշտը: Բայց երբէք չէի ձգտում նրա մէջ թուլացնել որդիական սէրը: Դա կըլինէր ապարդիւն ջանք, այն ինչ՝ ես, փոխանակ մխիթարելու, կ'աւելացնէի նրա դառնութիւնները:

Ես ուրախ էի, որ նա հետզհետէ աւելի ու աւելի յափշտակվում էր Ադելաիդայով: Դա, անկասկած, կարող էր ցրվել նրա թախիծը կամ գոնէ թեթևացնել, դա միակ դեղն էր նրա բարոյական տառապանքի դէմ:

Մի օր նա մտաւ իմ սենեակը ուրախ տրամադրութեամբ: Առաջին անգամն էի տեսնում նրա մեղամարտի դէմքի վրայ կենսասիրութեան զուարթ ժպիտ: Առանց քաշվելու, առանց յառաջաբանի, նա բացարձակ յայտնեց, թէ արդէն իւր սէրը բացադրել է Ադելաիդային և հաւանութիւն է գտել նրա կողմից: Ադելաիդան հիասնալի աղջիկ է, սիրում է, կարող է հասկանալ նրան: Եւ մի ամբողջ քառորդ ժամ նա գովում էր գերմանուհուն և հրճվում փոխադարձ սիրով: Ես չըկարողացայ ինձ զսպել ինչպէս սիրոյ զգացումը դեռ չըճաշակած մի մարդ, շտապեցի գործին աւելի խորը նայել և հարցրի.

— Բայց ինչ վերջ կունենայ այդ սէրը...

— Ես կամուսնանամ նրա հետ, ահա ինչ վերջ կունենայ, — պատասխանեց նա դրակահօրէն:

Խոստովանում եմ, այդ մասին ես չէի մտածել: Ինձ թւում էր, թէ դա մի ժամանակաւոր յափշտակութիւն է, շուտ սկսվել է, շուտով էլ կանցնէ: Լսելով Սանթուրեանի վճռական պատասխանը, ես ինքս իմ հարցից ամաչեցի. ինչպէս էի յանդգնել ենթադրելու անգամ, որ մի այդպիսի աղնիւ մարդ կարող է թեթևամիտ խաղ խաղալ մի երիտասարդ և անարատ աղջկայ հետ: Բայց, մի և նոյն ժամանակ, ես հոգով ընդդէմ էի նրա ամուսնանալուն: Չըզիտեմ ինչու, հաւատացած էի, որ Ադելաիդան երբէք

չի կարող Սանթուրեանի համար կեանքի արժանաւոր ընկեր լինել: Ճշմարիտ է, նա սիրուն էր, կրթված, աշխատասէր և, ինչպէս գերմանուհի, գուցէ կարող էր լաւ տանտիկին լինել: Բայց ինձ խորթ էր թւում նրա ծայրայեղ ուրախ բնաւորութիւնը, որքան էլ այդ բնական լինէր նրա հասակում: Արդէն նա չափից դուրս շատ էր ծիծաղում, թուշկոտում ու երգում: Եւ դա ես մի ապագայ ամուսնու համար թեթեւամտութեան նշան էի համարում: Բայց եթէ ճիշտ է, որ կօնտրաստները հակումն ունեն գէպի միմեանց, Սանթուրեանը պէտք է սիրէր Ադելաիդային, որովհետեւ այդ կողմից նրանք կատարեալ կօնտրաստներ էին:

Միայն մի բան ինձ չրթողեց այդ օրը անկեղծ լինել: Սանթուրեանը մտադիր էր ամուսնանալ ոչ իսկոյն, այլ իւր ուսումը աւարտելուց յետոյ: Լ՛հ, մտածում էի, ով գիտէ այս մի տարուայ ընթացքում ինչեր կը պատահեն, ինչո՞ւ այժմեանից իմ կասկածներով թունաւորեմ բարեկամիս երջանկութիւնը:

Այժմ ճաշի միջոցներին Սանթուրեանը Ադելաիդայի կողքին էր նստում: Լեհացին ինձ զանազան նշաններ էր անում, թէ ամեն բան հասկանում է, և ներքուստ ծիծաղում էր Չարիֆեանի վրայ: Ռուս ուսանողը անտարբեր էր. նա մտքով զբաղված էր իւր սրտի ընտրածով: Պառաւ տանտիկինը, կարծես, նոյնպէս հասկացել

էր բանի էութիւնը և չէր երեւում, որ հակառակ լինի իւր աղջկայ կամքին: Սանթուրեանին նա հաւանում էր և միշտ գովում մեր մօտ նրա լրջամտութիւնը: Իսկ Չարիֆեանը... Նա դեռ ևս զսպում էր իրան և շարունակում Սանթուրեանի հետ իր բարեկամութիւնը: Այդ մարդը ունէր կամքի ոյժ: Բայց ինձ թւում էր, որ նա այլ ևս չի նախանձում, ցաւում է միայն իր նուիրած թանկագին հովանոցի մասին: Դա սխալ էր, և ես յետոյ հասկացայ, որ սխալված եմ..

Ինչ ասել կուզի, որ այժմ Սանթուրեանը աւելի զբաղված էր իւր սիրոյ առարկայով, քան մի ուրիշ բանով: Նա տանում էր օրիորդին թատրոն, նուազահանդէսներ, զբօսանքի, և ես զգում էի, որ սէրը նրա ուսանողական նիհար դրպանին աժան չի նստում: Մօտ երկու ամիս անցաւ այդպէս: Չմեռը վերջանում էր, համալսարանական քննութիւնների ժամանակը մօտենում: Մի օր նկատեցի, որ Սանթուրեանը սեղանի քով նստել է Ադելաիդայից հեռու և չի խօսում նրա հետ: Իսկ օրիորդը, գլուխը կրծքին թեքած, տխուր նայում է սփռոցին, չի ուտում, միայն ձեւի համար է մեղ հետ նստել: Չարիֆեանը նստած էր նրա հանդէպ և իր հայեալքը չէր հեռացնում նրանից: Դժուար էր կարգալ այդ մարդու դէմքի վրայ նրա հոգու շարժումները: Նա չըզիտէր ոչ ամօթից կարմրել, սրովհետեւ միշտ կարմիր էր, ոչ բարկութիւնից դուռնատվել և ոչ

ուրախութիւնից ոգևորվել:

— Հետեեալ և երրորդ օրը Սանթուրեանը դարձեալ Ադելաիդայից հեռու էր նստել, դարձեալ օրիորդը տխուր էր և դարձեալ Զարիֆեանը գիտում էր նրան: Իսկ չորրորդ օրը Ադելաիդան ճաշի չեկաւ: Իմ հետաքրքրութիւնը շարժվել էր, կամենում էի իմանալ այդ լուռ տեսարանների պատճառը: Զգում էի, որ անշուշտ մի անախորժ բան է պատահել:

Հէնց այդ օրը երեկոյեան Սանթուրեանը պղտորված մտաւ իմ սենեակը:

— Էլի ի՞նչ է պատահել, — հարցրի ես:

— Դժբաղդութիւն. օրիորդը ինձանից խոյս է տալիս:

— Ինչո՞ւ:

— Հէնց այդ «ինչուն» է ինձ հետաքրքրում: Դու պէտք է ինձ օգնես պատասխանը գտնելու:

— Ե՞ս:

— Այո՛: Դու պէտք է նրանից բացադրութիւն պահանջես:

— Ինչո՞ւ ինքդ չես պահանջում:

— Նա ինձ ոչինչ չի ասում: Նա ինձ հետ չի ուղում խօսել:

— Ահա՛ ինչ...

— Այո՛, նա, ինձ տեսնելիս, երեսը շուռ է տալիս:

— Էէ, շատ լաւ, դու էլ քո երեսը շուռ տուր:

— Յետո՞յ:

— Յետոյ դու քեզ համար, նա իւր համար:

Սանթուրեանը զարմացած նայեց աչքերիս: — Դու կատա՞կ ես անում, — գոչեց նա:

— Իսկի էլ չէ: Ես չեմ հաւանում քո սէրը, եթէ միայն պլաստիկան չէ և այդպէս էլ չըպիտի մնայ:

— Պատճա՞ռը:

— Ադելաիդան քո ընկերը չէ:

— Իհարկէ, նա ինձանից շատ և շատ բարձր է: Այդ ես գիտեմ:

— Ո՛չ: Նա քեզ արժանի չէ:

— Մի՛ ծաղրիլ ինձ, Միրաբեան:

— Ես չեմ ծաղրում: Ինձ թւում է, որ Ադելաիդան քեզ չի սիրում, գոնէ այն սիրով, որին արժանի է մի լուրջ մարդ:

— Կը նշանակէ, ես լուրջ մարդ չեմ:

— Ընդհակառակը...

— Ինչ և է, — ընդհատեց իմ խօսքը Սանթուրեանը, — դու պէտք է նրանից բացադրութիւն ինդրես իմ կողմից:

Ես ընկայ մտատանջութեան մէջ: Դա մի նուրբ միջամտութիւն կրթինէր իմ կողմից, և ես հագիւ թէ ընդունակ լինէի կատարել ինձ առաջարկված դերը:

— Ների՛ր, Սանթուրեան, — ասացի ես, — այդ չեմ կարող անել:

— Ինչո՞ւ:

— Նախ, իմ սկզբունքների դէմ է երկու սիրահարների մէջ մտնելը, երկրորդ, ես անձամբ

անկեղծ ցանկանում եմ, որ դու հեռանաս այդ օրիորդից:

— Ուրեմն, մերժում ես: Շատ լաւ. կըդիմեմ Զարիֆեանի միջնորդութեանը:

— Զարիֆեանի՞, — հարցրի ես, — չը կարողանալով թագցնել իմ զարմանքը:

— Այո՛, ճարս ինչ: Դու գիտես, որ ուրիշ ընկեր չունեմ...

— Նամա՛կ գրիր...

— Նամա՞կ: Կան այնպիսի բաներ, որ նամակով չի կարելի բացադրել: Ես գիտեմ, դու Զարիֆեանին չես սիրում, բայց նա վատ տղայ չէ, գըլխաւորը — նա մօտիկ է Ադելաիդային:

Այս անգամ մի քիչ վրդովվեցի և ասացի.

— Բայց միթէ դու չե՞ս նկատում, որ նա ինքն անտարբեր չէ դէպի Ադելաիդան:


— Դուցէ առաջ այդպէս էր, իսկ այժմ նա սիրում է օրիորդին ինչպէս եղբայր: Նա մինչև անգամ խրախուսում է իմ սէրը: Նա տակաւ մարդէ:

— Տակաւով լինելուն խօսք չունեմ, բայց...

— Ի՞նչ բայց...

— Սանթուրեան, մի՛ նեղանար ինձանից, եթէ ասեմ «հեռու կաց այդ օրիորդից էլ, այդ Զարիֆեանից էլ...»

Աւելի ոչինչ չասացի: Նա մի փոքր մտածեց և յետոյ մի վճռական շարժում գործեց և շտապով դուրս եկաւ իմ սենեակից դժգոհ դէմքով...



Այստեղ Միրաբեանը ընդհատեց իւր պատմութիւնը և սկսեց կրակը վառարանի մէջ խառնել: Ապա մեզ համար դարձեալ մի մի բաժակ թէյ ածեց և ասաց.

— Կարծեմ, պարոններ, դուք յոգնեցիք լսելուց: Կամենա՞ք շարունակութիւնը յետաձգեմ վաղուան:

Դեռ երեկոյեան ութ ժամն էր: Մենք միաձայն խնդրեցինք նրան շարունակել և աւարտել: Նորից մի ծխախոտ վառելով, նա այս անգամ նստեց վառարանից հեռու:



Հետեւեալ օրը, — շարունակեց Միրաբեանը, — Զարիֆեանը նստել էր իւր առաջուայ տեղը և կատարում էր նախկին դերը, այսինքն ծառայում էր օրիորդին, հաճոյախօսութիւններ էր անում, միայն չափազանց զգոյշ: Երբեմն նա գաղտուկ մտիկ էր անում Սանթուրեանի երեսին և ուսերը վեր քաշում, կարծես, ասելով. «չեմ հասկանում, ի՞նչ է պատահել այս աղջկան»:

Մի կիրակի օր Սանթուրեանը ճաշի չեկաւ: Կասկածը տիրեց ինձ: Այդ մարդը այնքան զգայուն էր, որ, ով գիտէ, ինչ կարող էր անել ըսպէի ազդեցութեամբ, ո՛չ ուրիշին, այլ ինքն իրան, որովհետև նա ոչ ոքի թշնամի չէր կարող լինել, և չէր էլ ուզում լինել, բացի ինքն իրան: Նրա բոլոր վրդովմունքը, ատելութիւնը, նրա սրտի ամբողջ

Թոյնը, հոգու բուռն կրակը միայն և միմիայն
իրան էին վստասում:

Մի քանի անգամ ես անցայ նրա սենեակը,
որ տեսնեմ վերադարձել է արդեօր: Չըկար: Օրը
մթնեց, թէյի ժամանակն էլ անցաւ: Դարձեալ
չըկար: Վերջապէս, արդէն կէս գիշեր էր, երբ
լսեցի նրա դրան ձայնը և շտապեցի գնալ նրա
մօտ:

— Ահա, այդ դո՞ւ ես, մտի՛ր, — ասաց նա, — մի
ձեռում պահած վառ լուցկին, միւսում լամպարի
ապակին:

Նա սենեակը լուսաւորեց, վերարկուն չալտեց
մի կողմ և յոգնած, շնչասպառ նստեց անկողնա-
կալի վրայ:

— Առաւօտից մինչև այժմ պատում էի փողոց-
ներում, — ասաց նա վերջապէս, — պատասխանելով
իմ հարցին:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ես անբաղդ մարդ եմ: Այսօր
առաւօտ Չարիֆեանը ինձ հաղորդեց, որ խօսել
է Ադելաիդայի հետ...

— Հետևա՞նք...

— Ադելաիդան ամաչում է ինձ սիրել, որով-
հետև ես անհաշտ մարդ եմ, որովհետև ամենը
ինձանից երես են դարձնում, որովհետև բոլորը
ինձ արհամարհում են...

— Ո՞րտեղից գիտէ նա այդ բանը:

— Էէ, այդ ինձ համար մի և նոյնն է...

Ես ժպտացի:

— Տեսա՞ր ուրեմն, — ասացի, — որ դա սէր չէ, այլ
թեթեամտութիւն: Մի՞թէ սիրող կինը ուրիշների
աչքով կրնայի իւր սրտի ընտրածին:

— Ոչ, ի հարկէ, ոչ: Բայց Ադելաիդան անփորձ
երեխայ է: Նա դեռ չի կարող իւր խելքով դա-
տել: Ես այլ ևս սիրոյ մասին չեմ մտածում: Ո՛չ,
ինձ այժմ տանջում է մի ուրիշ բան: Երեակայիր,
Չարիֆեանը ասում է, թէ Ադելաիդան իմ մասին
վատ գաղափար ունէ:

— Օրինա՞կ:

— Լեզուս չի գալիս ասելու...

— Դա՞րձեալ:

— Իբրև թէ ես կեղտոտ նպատակ եմ ունեցել...
Հասկանո՞ւմ ես...

— Ահա ինչ: Բայց փաստ ունէ՞ այդպէս կար-
ծելու...

— Փա՛ստ: Ասածուն է յայտնի, որ ես իմ մաքուր
սէրն անգամ ամօթով եմ նրան յայտնել:

— Եւ դու այդ բոլորից յետոյ չե՞ս ուզում ան-
ձամբ օրիորդից բացազրութիւն պահանջել:

— Չարիֆեանը պնդում է, թէ Ադելաիդան այդ
մասին լսել անգամ չի ուզում:

Չարիֆեանը ասում է, թէ օրիորդը վատ
գաղափար ունէ Սանթուրեանի մասին, Չարիֆ-
եանը պնդում է, թէ օրիորդը չի ուզում տեսնուիլ
Սանթուրեանի հետ, — բոլորը Չարիֆեանը... Ոչ,
մտածում էի ես, այստեղ մի գաղտնիք կայ:

— Սանթուրեան, — կրկնեցի ես, — մոռացի՛ր այդ աղջկան, ձեռք քաշիր այդ Զարիֆեանից:

— Այժմ ես կաշխատեմ կատարել քո խորհուրդը: Մոռանալ Ադելաիդային, ի հարկէ, չեմ կարող, բայց կըհեռանամ նրանից: Չի կարելի ուժով սէր գրաւել: Նա իրաւունք ունէ ինձ արհամարելու, որովհետեւ բոլորը արհամարհում են: Ոչինչ, թող արհամարհէ, ես այլ ևս նրան չեմ ձանձրացնիր...

Մի քանի օր անցած պառաւր եկաւ իմ սենեակը և վշտացած յայտնեց, թէ Սանթուրեանը տեղափոխվում է:

Ես շտապեցի նրա սենեակը: Նա, չբռնուցնելով կրծոտելով, անցուղարձ էր անում: Արդէն ժողովել և կապկպել էր իւր իրեղէնները և սպասում էր կառքի:

— Ո՞ւր ես գնում:

— Ես իսկոյն ուղում էի գալ քեզ մօտ: Տեղափոխվում եմ ուրիշ սենեակ:

— Մի՞թէ արդէն բանը այդ տե՞ղն է հասել:

Նա ասաց, թէ չի կարող այդքան մօտիկ ապրել և այդքան հեռու լինել Ադելաիդայից, թէ զգում է, որ իւր ներկայութիւնը ձանձրացնում է օրիորդին և թէ, վերջապէս, հպարտութեան զգացումը չի թոյլ տալիս այժմ նոյն իսկ որ և է բացադրութիւն խնդրել նրանից:

Անցաւ մօտ մի շաբաթ: Ես Սանթուրեանին ոչ մի տեղ չէի հանդիպում: Նա համալսարանում

էլ չէր երևում: Դժբաղդաբար, ես մոռացել էի հարցնել նրա նոր սենեակի տեղը: Վերջապէս, մի առաւօտ հանդիպեցի նրան Տվերսկայա փողոցում: Նա շտապով մօտեցաւ ինձ և ամուր սեղմեց իմ ձեռք: Ես կիսահեզնաբար հարցրի, արդեօք առողջանո՞ւմ է նրա սրտի վէրքը: Նա դառնութեամբ ժպտաց և խնդրեց, որ կատակ չանեմ:

— Իմ վէրքն աւելի խոր է, քան նոյն իսկ ինքս էի կարծում:

Երկու օր առաջ նա տեսել էր Ադելաիդային Զարիֆեանի հետ ձիաքարշով անցնելիս: Առաջին անգամ նա զգացել էր, թէ ինչ ասել է խանդ:

— Թէև, — աւելացրեց նա, — իրաւունք չունեմ Զարիֆեանի վերաբերմամբ խանդոտ լինելու:

Ես չըկարողացայ զսպել իմ վրդովմունքը Զարիֆեանի դէմ: Պատմեցի Սանթուրեանին ամեն ինչ, որ դիտել էի նրա բացակայութեամբ: Ադելաիդայի նորից ուրախ ու զուարթ գառնալը, Զարիֆեանի յողթական ժպիտները, նրանց գաղտնի շնչիւնները, օրիորդի այցելութիւնները Զարիֆեանին, այս բոլորը մի շաբաթ էր արդէն լուսաբանում էին ինձ համար նրանց յարաբերութիւնները:

Սանթուրեանը լսում էր թղթի պէս գունատ վաժ: Նրա կուրծքը ուժգին բաբախում էր, շնչառութիւնը այրում էր իմ դէմքը, աչքերը,

կարծես, ձգտում էին դուրս գալ իրանց խորշերից: Նա երկիւղալի էր այդ բոպէին: Ես զզւացի իմ տուած անսպասելի հարուածի մասին: Բայց արդէն ուշ էր: Գնացի նրա հետ իւր նոր սենեակը և այդ դիշեր անցկացրի այնտեղ: Երկար երկար ժամանակ աշխատում էի նրան հանգստացնել:

Այո՛, պարոններ, իմ բարեկամը սիրում էր և տանջվում: Այժմ նրա ներքին կրակին աւելացել էր և խանդի զգացումը. մի բան, որ ամենից աւելի էր վտանգաւոր նրա նման մի զգայուն երիտասարդի համար: Նա օրից օր աւելի մռայլ էր դառնում, բայց և օրից օր թանձրանում էր նրա սրտի հուրը, ուտելով և մաշելով նրան: Նա հետզհետէ դառնում էր լռակեաց, յուռտես, բայց ոչ կասկածամիտ կամ վատախօս: Երբէք ես նրանից չէի լսում մի գանգատ Զարիֆեանի դէմ, նոյն իսկ որ և է դժգոհութիւն: Նա միայն բողբոջում էր իւր ճակատագրի դէմ և ամեն բանում իրան էր մեղաւոր համարում: Նա չէր մեղադրում նաև Ադելաիդային:

— Նրա բարի կամքն է՝ սիրել, ում հաւանում է, — ասում էր նա, — և ես ոչինչ վատ բան չեմ տեսնում նրա արածի մէջ: Ես չեմ մեղադրում անգամ, որ նա իմ մասին վատ գաղափար ունէ: Սխալվում են շատ անգամ հասուն մարդիկ, իսկ նա դեռ երեխայ է, մի օր խեղճի կըզայ և կը հասկանայ, որ սխալված էր:

Մեր քննութիւնները վերջացան: Ես ուղևորվեցի Կովկաս, նախապէս խօսք վերջնելով Սանթուրեանից, որ ինքն էլ արձակուրդներին հեռանայ Մոսկվայից: Ես յոյս ունէի, որ տեղափոխութիւնը կարող է թեթեւցնել նրա վիշտը: Եթէ իմ ծնոյներից շատապուական նամակ ստացած չըլինէի, կըսպասէի, նա՛ էլ իւր քննութիւնները վերջացնի, որ միասին վերադառնանք հայրենիք:

Երեք շաբաթ իմ ծննդավայրում մնալուց յետոյ եկայ Թիֆլիզ: Առաջին իմ ցանկութիւնն էր տեսնել Սանթուրեանի հետ: Հէնց իմ գալու օրը գտայ նրա բնակարանը: Նա տանն էր: Վաղելով դուրս, դիմաւորեց ինձ պատշգամբի վրայ:

Երբ, պարոններ, բարեկամը ամեն օր աչքիդ առաջ է, չես նկատում նրա օր օրի վրայ արտաքուստ փոխվելը: Բայց բաւական է, որ նա հեռանայ մի քանի շաբաթով, և դու նորից տեսնելով, կըզանես նրան փոխված: Հայելին շնորհակալութեան արժանի մի պարագայ է: Նա պահպանում է մեր իլլիւզիան և աննկատելի կերպով օր օրի վրայ մեզ հաշտեցնում ձերութեան հետ:

Ընդամենը մի ամիս էր ես չէի տեսել Սանթուրեանին, և որքա՛ն փոփոխութիւն այդ կարճ միջոցում: Նրա այտերը ներս էին ընկել, ծնօտը երկարացել էր, ճակատի ոսկորները աւելի էին

ցցվել: Քսանուչորս տարեկան երիտասարդի գանդուր մագերի մէջ ես նկատեցի ճերմակներ: Մի բան, որ նրա արտաքինում անփոփոխ էր— դա նրա սևաթոյր աչքերի կրակոտ փայլն էր:

Նա ինձ ծանօթացրեց իւր ընտանիքի հետ: Մայրը մի նիհար կին էր, արտաքուստ նման իւր որդուն: Քոյրը, հակառակ իմ սպասածին, չիկահեր էր, փոքր եղբայրը— նոյնպէս:

Նրա հօր գործը անցել էր պալատ: Շատ էին աշխատել նրան երաշխաւորութեամբ հանել բանտից մինչև գործի երկրորդ քննութիւնը: Չէր յաջողվել: Փաստաբանը յոյս էր տալիս, որ պալատը ուրիշ կերպ կը նայէ դատին, քան դատարանը: Ընտանիքը ապրում էր այս յուսով:

Ազգականները մեծ մասամբ երես էին դարձրել նրանցից: Օրիորդը ամօթից և վշտից չէր ուզում հասարակութեան մէջ երևալ: Մայրը ամեն օր արտասուք էր թափում: Գիմնազիստը տարուայ կիսին, չըդիմանալով ընկերների ծաղրին, դադարել էր գիմնազիտն գնալուց և պէտք է մի տարի կորցնէր:

Այս բոլորը պատմեց ինձ Սանթուրեանը, երբ մենք առանձնացանք նրա սենեակը:

— Չըգիտեմ ո՞ր մէկին մտիթարել, ո՞ր մէկի համար մտածել, — ասում էր նա վշտացած:

Ես ամեն օր այցելում էի նրան: Միասին դնում էինք զբօսանելու քաղաքից դուրս:

Երբէք չեմ մոռանալ այդ զբօսանքները և իմ

բարեկամի տաղանտաւոր զրոյցները: Ա՛խ, սիրում էի նրա յանդուգն դատողութիւնները, նրա ազատ և աներկիւղ գաղափարները, նրա պարագօքսները, մտքի անկանոն, բայց հսկայական թռիչքները: Երբեմն մի անսպասելի դարձուածով, անփոյթ ձևով արտասանած մի խօսքով որոշում էր այս կամ այն երևոյթի ներքին իմաստը: Ոչինչ չէր խուսափում նրա սուր աչքերից, ոչինչ, որ միայն վերաբերում էր հասարակական կեանքին:

Նա քստմնում էր այն բոլորից, ինչ-որ, նրա կարծիքով, չէր բղտում մարդու իսկական զգացումներից: «Պատժվիր, բայց մի՛ կեղծիլ», ահա նրա նշանաբանը, և այդ նշանաբանին հաւատարիմ մնաց մինչև վերջը...

Մի անգամ ես նրան ուժով տարել էի, չեմ յիշում, ինչ ընկերութեան ընդհանուր ժողով: Այնտեղ կային հայեր, ռուսներ, վրացիներ, նոյն իսկ մի քանի թուրքեր: Բոլորն էլ գրեթէ բարձր կրթութեան տէր մարդիկ էին: Քննվում էր մեր երկրի տնտեսական վիճակին վերաբերեալ մի խնդիր: Սանթուրեանը ինձ հետ հեռուից գիտում էր ժողովը և ուշադրութեամբ ականջ դնում խօսողներին: Նրա երեսից չէր հեռանում հեղնական ժպիտը:

— Նայիր, — ասաց նա, իմ ուսին խփելով, — այստեղ բոլորը կեղծում են: Նայիր այն պարոնին, որ այս բոլոր գիւղացիների շահերի անունով էր խօսում: Տես ինչպէս է իւր բեղերը ծածուկ

սրում և ինչպէս է իւր թանգագին փողկապը ուղղում: Նա կեղծում է: Համոզված եղիք, որ փողկապը նրա աչքում աւելի գին ունէ, քան ժողովրդի շահերը: Նայիր այն միւսին, հայ է, լիբերալ է համարվում, բայց տես ինչպիսի քծնող գէմքով է նայում իւր մօտ նստած իշխանաւորին... Պաշտօնի է սպասում... Վաղը նա կը դառնայ ժողովրդի թշնամին... Նայիր այն կարմիր այտերով պարոնին: Նա էլ է գրում իմ հօր գէմ: Բայց մի անգամ նրան հարցրին մի հասարակական դումարի մասին, Զաքարիայի պէս պապանձվեց: Սրանք են մեր երկրի աղը: Ո՛չ, Միրաբեան, գլուխս պտտում է... գնանք այստեղից...

Եւ նա, իմ թեկից քաշելով, դուրս բերեց ինձ այդ ժողովից:

— Իսկ իմ հայրը, — ասաց նա փողոցում, — այդ կիսակիրթ մարդը գոնէ ուրիշներին աղնութեան դասեր չէր տալիս: Կարելի է ես այսքան չըցաւէի նրա մասին, եթէ նրան դատապարտող հասարակութեան բարոյական հայելին մաքուր լինէր...

Եւ բոլոր նրա խօսակցութիւնների մէջ իբրև մի մտայլ զիծ անցնում էր հօր անունը:

Երբեմն նրան տանում էի հասարակական այգիներ, և այնտեղ մենք հանդիպում էինք ծանօթ ուսանողներին: Նա այժմ ինքն էր ամենից երես դարձնում: Նա ոչ մի տեղ չէր ուղում եր-

կար մնալ: Միշտ յուզված, միշտ մտադրաղ նա բոլէ անգամ հանգստութիւն չունէր ներքին կրակից: Առաջ ես կարծում էի, որ իւր հօր դժբաղդութիւնն է նրան այդպէս դարձրել: Բայց երբ մտերմացայ նրա հետ, երբ ծանօթացայ նրա անցեալին, իմացայ, որ միշտ այդպէս է եղել: Նա ամեն օր յիշում էր Ադելաիդային: Նա ցանկանում էր մտացութեան տալ իւր կարծատեւ երջանկութիւնը: Բայց իզուր: Ես չեմ պատմիլ ձեզ նրա կրած տառապանքները: Դա ինձ շատ հեռու կըտանէր: Կըհրաւիրեմ ձեզ վերադառնալ Մոսկվա, գէպի ուր ձգտում էր Սանթութուրեանը:

Օգոստոսի վերջին նա Ռուսաստան ուղևորվեց, իսկ ես իմ ծննդավայրը: Այս անգամ մօրս տեսայ անկողնի մէջ ծանր հիւանդ: Եօթ շաբաթ նա տատանվում էր մահի և կեանքի մէջ: Ես չէի կարող նրանից հեռանալ, թէև վաղուց պէտք է լինէի համալսարանում: Վերջապէս, նա սկսեց առողջանալ, և արդէն հօկտեմբերի վերջն էր, երբ հասայ Մոսկվա: Վճռել էի իմ ուսանողութեան այդ վերջին տարին էլ անցկացնել գերմանացի պառաւի բնակարանում: Մտածելով, գուցէ իմ սենեակը արդէն վարձված է կամ տանախրուհին տեղափոխվել է ուրիշ տուն, ես մի օրով իջևանեցի հիւրանոցում և նոյն օրը գնացի պառաւին տեսնելու:

Յոյս ունէի Ադելաիդային հանդիպել իւր

մօր մօտ: Թէ ինչ հետեանք էին ունեցել նրա յարաբերութիւնները Չարիֆեանի հետ, չըզիտէի: Միայն մտածում էի, որ Չարիֆեանը չըզիտի լինի Մոսկվայում: Նա արդէն աւարտել էր ուսումը և պէտք է վերադարձած լինէր հայրենիք:

Մտայ ծանօթ տան բակը և դիմեցի ուղղակի դէպի պառաւի բնակարանը: Գաւթապահը նախկինն էր: Մօտեցաւ ինձ և, բարեկրօյ, հարցրեց.

— Երևի, նեմկային էք ուզում տեսնել:

— Այո՛:

— Չըկայ նեմկան:

— Տեղափոխվե՞լ է:

— Այո՛:

— Ո՞ւր:

— Այնտեղ, ուր բնակարանի համար վարձ չեն տայիս, — պատասխանեց գաւթապահը ուս մութիկին յատուկ սառն հեղնութեամբ դէպի մահը:

Խեղճ պառաւ. նա մեռել էր: Նա առաւօտեան հիւանդացել էր, երեկոյեան հողին աւանդել Աստծուն: Գժբաղդութիւնը պատահել էր ամառուայ կիսին: Աղելախիղան մօր մահից յետոյ վաճառել էր կահ-կարասին և տեղափոխվել ուրիշ տեղ: Մեր բնակարանը այժմ կարուձևի արհեստանոց էր դարձել...

Այլ ևս ոչինչ չըհարցրի և դուրս եկայ փողոց մի ծանր թախիժ սրտումս: Կարծես, ինձ զրկեցին մի ընտանի օթեանից, այնքան ընտելա-

ցել էի այդ բնակարանին և իմ տանտիրուհիներին: Անբաղդ պառաւ, դոնէ տեսա՞ր քո երկրորդ աղջկայ բաղդաւորութիւնը, մտածում էի ես:

Հետեւեալ օրը սենեակ վարձեցի մի ուս ընտանիքի մօտ և իսկոյն տեղափոխվեցի: Համալսարանում իմ աչքերը որոնում էին Սանթուրեանին, բայց անցաւ մի ամբողջ շաբաթ, չէի տեսնում: Ոչ ոք չըզիտէր նրա բնակարանը: Ասում էին, թէ շատ քիչ է դասախօսութիւններին գայիս: Նրա ամենախիստ դատաւորներից մէկը ծաղրաբար նկատեց.

— Ժամանակ չունէ, դատաւար է, բուլվարներում թռչուններ որսարջ...

— Այդ նրա դատաւարները չէ, — ասացի ես զայրացած:

Գատապարտօղը թարս նայեց ինձ և երեսը շուռ տուեց: Ես դդացի, որ Սանթուրեանին պաշտպանելն այժմ աններելի է համարվում: «Թռչունների որսը» մի նոր բամբասանք էր, որ առաջ չըկար: Մի ուրիշ անգամ նոյն դատաւորը յանդգնեց կոպտաբար նկատել.

— Չարմանայի չի լինիլ, եթէ այժմ ձեր ոչ ոքի չըհաւանող, անհաշտ բարեկամը սրիկաներին թողնէ և դառնայ «թռչունների» հախանաւոր և փաստաբան...

Արիւնս գոխովս տուեց, ես կորցրի իմ սառնարտութիւնը և ապտակեցի սանձարձակ պարոնին: Դա առաջին և վերջին անգամն էր, որ

ես ձեռ էի բարձրացնում մարդու վրայ: Մեզ իսկոյն չըջապատեցին ուսանողները և բաժանեցին: Նոյն օրը սպասում էի, որ վիրաւորված պարոնը ինձանից հաշիւ կըպահանջէ: Իմ յոյսերը չարդարացան. նա ապտակս կուլ տուեց:

Վերջապէս, մի օր դնացի հասցէների գրասենեակ և իմացայ Սանթուրեանի հասցէն: Նոյեմբերի սկիզբն էր: Երկինքն ամպամած էր, երկիրը սառած, ձիւն չէր գալիս, բայց շոր և կարող ցուրտ էր: Կառքերի անիւները խուլ գըրդիւն էին արձակում սառած սալայատակների վրայ: Նիհար վերարկուիս մէջ փաթաթված, սարսուելով անցայ Եկատերինեան բուլվարը, ծովեցի դէպի աջ և մտայ Մալանա Բասմաննայեա փողոց: Սյնտեղ էր կենում իմ բարեկամը: Յիշում եմ, պարոններ, երբ ես մօտեցայ երկյարկանի տան դռներին, սիրաս սկսեց բարախել: Սիրում էի Սանթուրեանին, և հէնց այդ օրը ուսանողների ժողովը արտաքոյ կարգի նիստում վճռել էր ինձ յանդիմանութիւն անել—նրա պատճառով սանձարձակ ուսանողին ապտակելուս համար: Չար կասկածները պաշարեցին ինձ. արդեօք կենդանի՞ է, առո՞ղջ է, արդեօք մի նոր դժբաղդութիւն չի՞ պատահել և այն և այն...

Սեղմեցի էլէքտրական դանդակի կոճակը: Դուռը բաց արաւ մի պատանի աղջիկ: Նա ինձ առաջնորդեց տան վերին յարկը: Պատշգամբի վրայ կանգնած էր մի նիհար, ոսկորոտ պառաւ

և կեղտոտ գոգնոցով սրբում էր իւզոտ ձեռները: Սանթուրեանի տանտիրուհին էր:

— Տանն է,— պատասխանեց նա իմ հարցին և, տանելով ինձ մի բաւական մութ նախասենեակ, ցոյց տուեց իմ բարեկամի սենեակը:

Երբ, առանց դռներին զարկելու, մտայ սենեակ, իմ աչքերը ոչինչ չնշմարեցին: Միայն զգացի, որ երկու նիհար թևեր առան ինձ իրանց գրկի մէջ:

— Վերջապէս, եկար, վերջապէս եկար,— կրկնում էր Սանթուրեանը, շապով կապելով իւր բաճկոնակի կոճակները:

Դա այն մօմենտներից մէկն է, որոնք ինձ վրայ խորը տպաւորութիւն են թողել և յաւիտեան չը պիտի ջնջվեն իմ յիշողութիւնից: Կաշի և ոսկոր— ահա ինչ էր մնացել այլ ևս իմ բարեկամից: Նրա ճակատի կապոյտ երակները աւելի որոշ էին գծաւորվել, պարանոցի ոսկորները դուրս ընկել: Ինձ թւաց, որ նա դժուարութեամբ է շունչ քաշում, և մի չար կասկած յղացաւ իմ մէջ:

— Դու հիւանդ ես,— գոչեցի ես աղամայ:

— Է՛հ, միշտ միևնոյնն եմ: Նստիր, ինչո՞ւ ուշացար, եթէ իմանայիր, ի՞նչ անհամբերութեամբ էի քեզ սպասում: Օ՛, չըգիտես, ինչեր են պատահել: Դու մարգարէ ես, դու ճանաչում ես մարդկանց...

Ես սկսեցի հարց փորձ անել, ոչինչ որոշ պատասխան չըստացայ, թէ ինչ է պատահել:

Պառաւ ի մահը գիտէի: Ադելաիդայի մասին սկսեցի հարցնել, նա, ատամները կրճակելով, գլուխը դառնութեամբ շարժեց: Իմ հետաքրքրութիւնը չափ չունէր: Նրա դէմքից, աչքերի առանձին արտայայտութիւնից պարզ երևում էր, որ պատահել է մի արտաքոյ կարգի բան:

— Ինչո՞ւ դասախօսութիւններին չես գնում:

— Դասախօսութիւնները կեանքումն եմ լսում: Ինձ համար արանում այժմ անբարոյական են համարում: Խօսքերով չեմ կարող պատմել: Գնանք իսկոյն, ես քեզ փաստը ցոյց կըտամ, և դու կիմանաս, թէ որն է իսկական անբարոյականութիւնը: Գնանք, դու պէտք է իսկոյն, հէնց այս րոպէիս տեսնես նրան...

Այս ասելով, նա շտապով հագաւ վերարկուն: Ես լուռ հեռեցի նրան: Դուրս եկանք փողոց:

— Ահա մօտիկ է, շուտով կըհասնենք...

Հագիւ անցանք հարիւր քայլ, նա կանգ առաւ մի երեքյարկանի նեղ տան առջև: Ներքին յարկը կիսով չափ գետնի մէջ էր: Նա մօտեցաւ գետնից հագիւ մի կանգուն բարձր—մի փոքրիկ և քառակուսի լուսամտի, երկու անգամ կամացուկ դարկեց ապակիին: Մի ձեռներսի կողմից սպիտակ վարագոյրները բաժանեց միմեանցից: Ես նշմարեցի մի կնոջ դէմք, որ իսկոյն չքայաւ: Սանթուրեանը շտապով բաց արաւ փողոցի դռները: Մենք մտանք, երկու աստիճան փողոցից ցած իջանք, անցանք մի նեղ կորրիդօր և մօ-

տեցանք մի մխրագոյն դրան: Սանթուրեանը բաց արաւ դուռը և, նայելով դէպի ներս, ասաց.

— Հետո հիւր կայ:

— Խնդրեմ,— լավեց ներսից մի կանացի ձայն, որ ինձ շատ տկար թւաց:

Մենք մտանք մի փոքրիկ սենեակ—համեստ կահաւորված: Բայց ո՞վ էր այնտեղ բնակվում, ինչո՞ւ Սանթուրեանը ինձ չէր ասում: Այս բոլորը մի առանձին խորհրդաւորութիւն էին տալիս մեր տարօրինակ այցին: Հետաքրքրութիւնից իմ սիրտը բաբախում էր: Սենեակի մէջ տեղում կանգնած էր մի երիտասարդ կին համեստ անային հագուստով: Ինձ տեսնելով, նա ժպտաց, շփոթվեց, կարմրեց և, ձեռք մեկնելով արտասանեց ճնշված ձայնով.

— Ա՛հ, այդ դ՞ուք էք, պարոն Միրաբեան:

Խորհրդաւորութեան քօյն ընկաւ իմ աչքերից, և ես ճանաչեցի Ադելաիդային: Բայց ո՞ւր էր այն զուարթ, թուչկոտող, առողջ դէմքով, ծիծաղկոտ և մշտաշարժ օրիորդը: Իմ դէմ կանգնած էր մի դուռնատ, նիհար և ամաչկոտ կին գլուխը կրծքին թեքած: Նրա սիրուն կազմուածքը այլ ևս չունէր իւր առաջուայ գեղեցկութիւնը, նրա ուսերը ինձ թւացին ցած իջած, կուրծքը նիհարած: Նրա գլխին ձգած էր մի մեծ գեղնագոյն շալ: Ես նկատեցի, որ, ինձ տեսնելով, նա շտապեց շալով ծածկել իւր իրանը...

Ես ոչինչ չըկարողացայ խօսել, ապշած նայ-

ու՛մ էի Ադելաիդայի պարանոցին, որ գծաւորվել էր կապոյտ երակներով: Ինձ թւում էր, որ այնտեղ խեղդվում է նրա հեկեկանքը, և նա հազիւ կարողանում էր իրան զսպել: Ես ակնարկեցի նրա մօր մահը և մի մխիթարական խօսք ասացի:

— Այո՛, մեռաւ, ինձ թողեց մենակ, — ասաց նա և սկսեց հեկեկալ: Խե՛ղճ մայր, խե՛ղճ մայր, — կրկնում էր նա արտասուախառն ձայնով, — նա միայն տասներկու ժամ հիւանդ մնաց: Առաւօտ զարթնեց թէ չէ, ասաց դըւլսը ցաւում է: Պառկեց, ու շաթափ եղաւ: Բժիշկ կանչեցինք, օգնել չըկարողացաւ... Ամբողջ օրը տանջվեց անխօս... միայն նայում էր երեսիս... Երեկոյեան տասը ժամին հօգին աւանդեց... Օօ, խեղճ մայր, բարի մայր, աշխատասէր մայր...

Բայց ես այլ ևս չէի խղճում պառաւին: Լաւ էր, որ մեռաւ և իւր աղջկան չըտեսաւ այդ խայտառակ դրութեան մէջ:

Առանց բացողութիւնների ես ամեն բան հասկացայ: Ի՛մ առջև կանգնած էր մի քաղաքակիրթ մարդու անասնական կրքերի զոհը: Ես միայն չէի կարողանում ինքս ինձ հաշիւ տալ, թէ ինչպէս նա գրաւեց այդ աղջկան մինչև այդ աստիճան...

Դժուար էր երկար ժամանակ դիմանալ քստմնեյի տեսարանին: Ի՛մ սիրտն էր մորմոքվում, երբ նայում էի Ադելաիդային: Նա ամաչում էր, չէր վստահանում ուղղակի նայել ի՛մ աչքերին: Ամա-

չում էր նաև Սանթուրեանը... ուրիշի արարքից: Բայց որպիսի՛ գուրգուրանքով, երախտագիտութեամբ և ակնածութեամբ էին նայում Ադելաիդայի թախծալի աչքերը ի՛մ բարեկամին:

Ես շտապում էի իմանալ այդ նողկալի դէպքի պատմութիւնը, ա՛յն, ինչ որ պատահել էր ինձանից յետոյ: Հարկաւ, անկարելի էր այդ մասին խօսել Ադելաիդայի մօտ: Մենք միմեանց հարց ու փորձ էինք անում կողմնակի բաների մասին, մինչդեռ երեքիս էլ ճնշում էր միևնոյն անախորժ միտքը, երեքս էլ զգում էինք մեր դրութեան կեղծիքը: Ես շտապեցի Ադելաիդային ազատել անախորժ դրութիւնից և հրաժեշտ տուեցի: Գիտէի, որ Սանթուրեանը պիտի հետևէ ինձ:

Մենք դուրս եկանք փողոց, և ես սկսեցի մի փոքր ազատ շնչել: Ի՛մ բարեկամը լուռ էր ամբողջ ժամանակ, մինչ անցնում էինք փողոցով: Ես միայն լսում էի նրա կրծքում խեղդվող հառաչանքների խուլ արտայայտութիւնը: Երբ հասանք նրա սենեակը, նա թուլացած, ընկճված նստեց բազկաթոռի վրայ, արտասանելով.

— Գու տեսար նրան, այժմ պատրաստ եմ լսել քո յանդիմանութիւնը:

— Ո՞ւմ պիտի յանդիմանեմ:

— Ինձ:

— Ինչո՞ւ:

— Որ ես չըբեցի քեզ, որ չուզեցի ճանաչել այդ մարդուն, որ կուրացայ և նրա բարեկամական

դիմակի տակ չըտեսայ տգեղ կերպարանքը: Ադեւախա՞ն: Նա ոչինչ մեղք չունէ: Մեղաւորը ես եմ: Ե՛ս, որ թոյլ գտնուեցի, չըկարողացայ յայթել իմ մէջ յիմար հպարտութեան զգայումը և ուժով, այո՛, նոյն իսկ ուժով, մի օր մանեւ Ադեւախա՞նի սենեակը, խնդրել, աղաչել, որ ինչ ունէր, ինքն անձամբ ասէր իմ երեսին:

Եւ նա սկսեց հետզհետէ աւելի ու աւելի գրգռվել: Նա պատմեց բոլորը, և այստեղ երեւան եկաւ, թէ կիրքը երբեմն ինչ սասկալի միջոցներէ է ընդունակ դիմելու: Զարիֆեանը իւր միջամտութեան ժամանակ բոլորը աղաւաղել էր — Ադեւախա՞նի ասածները Սանթուրեանի և Սանթուրեանի ասածները Ադեւախա՞նի մօտ:

Այդ դեռ վերջերը: Իսկ առաջ, երբ Ադեւախա՞ն հաշտ է եղել Սանթուրեանի հետ, Զարիֆեանը աշխատել է ամեն կերպ դցել իւր հայրենակցի վարկը նրա աչքում: Նա գործել է այնքան զգոյշ, այնքան խորամանկ, որ օրիորդը ինքն էլ չի զգացել, թէ ինչպէս իւր սրտում հետզհետէ նոր ծագած սիրոյն փոխարինում է ատելութեան զգացումը: Նա Սանթուրեանին Ադեւախա՞նի մօտ ներկայացրել է մի սրիկայ և աւազակ հօր զաւակ, որ ամենից արհամարված է, ամենից հալածված: Նա օրիորդի մօտ կարգացել է իւր հայրենակցի մասին լրագրներում, նոյն իսկ հայ լրագրներում տպված բոլոր յօդուածները: Սանթուրեանը հոգեպէս հիւանդ է,

դժբաղդ է, չի կարող սիրել — ահա ինչ է ասել Զարիֆեանը: Եւ ասել է այն ձեով, որ օրիորդը համոզված է եղել, թէ ասում է ընկերական սիրուց, բարեկամական կարեկցութիւնից գրգռված: Այսպիսով, նա օր օրի վրայ կաթիլ-կաթիլ կասկածանքի թոյնը թափել է Ադեւախա՞նի փափուկ և պարարտ սրտի մէջ:

— Գիտեմ, — շարունակեց Սանթուրեանը, — դու կարող ես ասել, թէ ինչո՞ւ Ադեւախա՞ն գէթ մի անգամ ինձ հետ չըխօսեց այս մասին: Բայց այդ կարելի էր պահանջել մի հասուն և փորձված կնոջից, իսկ Ադեւախա՞ն, իբրև երեսայ, ամաչել է մի ակնարկ անգամ անել ինձ...

Այնուհետև, երբ Ադեւախա՞ն սկսել է երես գարձնել, երբ Սանթուրեանը խնդրել է Զարիֆեանին միջնորդ լինել, «առերես» բարեկամի համար բացվել է նորանոր մեքենայութիւնների ասպարէզ: Նա բոլորը կեղծել է, բոլորը աղաւաղել, երկու կողմերին ևս հակառակը պատմելով: Երբէք Ադեւախա՞ն չի ասել, թէ «արհամարհում է Սանթուրեանին», երբէք չի ասել, թէ «լսել անգամ չի ուզում Սանթուրեանին անձամբ բացազրութիւն տալու մասին», երբէք մանաւանդ չի ասել, թէ Սանթուրեանը իւր վերաբերմամբ «ստոր նպատակ է ունեցել»: Ընդհակառակը, Զարիֆեանը ինքն է ասել օրիորդին, թէ իբր Սանթուրեանը ծաղրել է իւր մօտ Ադեւախա՞նին, ասելով. «սիրուն խաղալիք է, կըխաղամ, յետոյ

կըշարտեմ...»

—Եւ այս բոլոր մեքենայութիւններին դիմել է, մեզ միմեանցից բաժանելու համար,—չարունակեց Սանթուրեանը:—Նա ինքն երգովել է Ադելաիդայի մօտ, թէ սիրում է նրան, տանջվում է նրա համար: Գիտեմ, դու կասես. «դարձեալ մեղքը քո Ադելաիդայինն է, ինչս՞լ այդքան թոյլ է գտնվել և խաբվել է այդպէս շուտ և հեշտ»: Ճիշտ է, բնական է այդ մեղադրութիւնը: Բայց, բարեկամս, մի՛ մոռանալ մի բան. Ադելաիդայի սէրը դէպի ինձ այնքան ամուր չի եղել, որ ոյժ տար նրան դիմանալու մի այդպիսի ճարպիկ մարդու խարդաւանքներին: Կարո՞ղ է մի նոր անկած և հազիւ հազ արմատ ձգած ծառ դիմանալ թէկուզ մի թոյլ փոթորիկի...»

Որքան ևս Սանթուրեանը արդարացնէր Ադելաիդային, այնուամենայնիւ օրիորդը իմ աչքում գէթ մի աստիճանի մեղաւոր էր իւր անբաղդութեան համար: Բայց այլ ևս ուշ էր այդ մասին վիճելը և աւելորդ: Ես միայն հարցրի.

—Այժմ ի՞նչ ես մտադիր անել:

—Իհարկէ, վրէժ առնել Չարիֆեանից:

Միանգամայն համոզված էի, որ Սանթուրեանը ընդունակ է մի արատաւորված օրիորդի համար ազնիւ և ասպետական վրիժառու լինելու, անգամ եթէ այդ օրիորդը Ադելաիդան չըլինէր: Նոյն իսկ ևս ինքս սպասարատ էի Ադելաիդայի պատիւը պաշտպանել, ուր մնաց նա՛, որ սի-

րում էր այդ օրիորդին:

—Բայց ի՞նչ պիտի լինի քո վրէժը,—հարցրի ես հետաքրքրված:

—Բարոյական վրէժ:

—Չեմ հասկանում:

—Շատ պարզ է. ես կամուսնանամ Ադելաիդայի հետ: Վաղուց եմ վճռել, միայն քեզ էի սպասում:

Ես զարմացած նայեցի նրա երեսին: Խուստովանում եմ, ամեն տեսակ վրիժառութիւն ինձ համար հասկանալի էր, բացի այդ մէկից...

—Դու զարմանո՞ւմ ես, Միրաբեան,—սկսեց բացադրել Սանթուրեանը,—բայց դա միակ վրիժառութիւնն է, որին պէտք է դիմէ ազնիւ մարդը: Լսի՛ր. Չարիֆեանը թողել է Ադելաիդային այդ դրութեան մէջ և հեռացել: Նա մտադիր չէ ամուսնանալ իւր զոհի հետ: Դժբաղդաբար, մի շարք ուսանողների շրջանում այդ տեսակ զոհեր սովորական են դարձել: Ստիպել Չարիֆեանին, որ իւր մեղքը քաւէ, ամուսնանայ—անկարելի է: Եթէ նա համաձայնվի էլ, Ադելաիդան երբէք չի կամենալ: Նա այժմ զզուանքով է յիշում Չարիֆեանին: Այս մէկ: Ի՞նչ պիտի անէ, ուրեմն, Ադելաիդան: Մնայ այդ դրութեան մէ՞ջ: Նա մի անպաշտպան երեխայ է: Նա շուտով կընկնէ վատ ճանապարհի, աշխարհը լի է փորձութիւններով, կընկնէ և կըլլորովէ անբարոյականութեան անդունդը: Համաձա՞յն ես, որ նա այդպէս կորչէ: Ոչ, դու

ազնիւ մարդ ես, չես կարող համաձայնելէ՛ Այս երկու։ Բայց կայ և երրորդ պատճառ։ Գա մենից զօրաւորն է. ես սիրում եմ Ագեւախիզային, սիրում եմ այժմ էլ, այդ դրութեան մէջ էլ, և աւելի, քան առաջ։ Ահա այն մօտիվները, որ ինձ դրդեցին իմ վճիռը կայացնել։

— Բայց քո ուսո՞ւմը, քո ծնողնե՞րը, քո՞յրը, եղբա՞յրը, հասարակութի՞ւնը...

— Մտածել եմ այդ մասին էլ։ Ուսումնա աւարտում եմ այս տարի։ Ծնողներս և քոյրս դէմ չեն լինել, որովհետև ամուսնանում եմ մի խաբւած, բայց, բարոյական կնոջ հետ։ Գալով հասարակութեանը, ոչ ոքի պարտաւոր չեմ հաշիւ տալ, իմ քայլը միայն ինձ է վերաբերւում։

Ես այլ ևս ոչինչ չստացի, այնքան վճռական էր նրա պատասխանը։ Հրաժեշտ տալիս, նա ինձ խնդրեց, որ իւր պատմածները առ այժմ ոչ ոքի չըհաղորդեմ...

Մի շաբաթ անցած Սանթուրեանը եկաւ ինձ մօտ և խնդրեց նրա խաչեղբայրը լինել։

— Այժմ ամեն ինչ պատրաստ է։ Ագեւախիզան տատանւում էր։ Նա ինձ սիրում է, բայց իմ զոհաբերութիւնը շատ մեծ էր համարում և չէր ուզում իմ կինը դառնալ։ Ես նրան համոզեցի, վաղն և եթ պէտք է ամուսնանամ։

— Բայց այդքան շո՞ւտ։

— Դու գիտես, որ յետաձգելը անյարմար է...

Այո՛, անյարմար էր։ Բայց ես այս անգամ

չըկամեցայ ոչ մի կասկած թագցնել իմ բարեկամից և բոլորը յայտնեցի։ Անշուշտ նրա վճիռը կրում է բարձր ազնուութեան և վեհանձնութեան դրօշմ, անշուշտ նրա արածը մի հերոսական քայլ է։ Բայց ո՞րտեղ կարող է հասցնել նրան այդ քայլը։ Լինել ամուրի և ամուսնացած—դրանք երկու միմեանցից շատ տարբեր դրութիւններ են։ Այն, ինչ—որ թեթև կարող է անցնել ամուրիի համար, մեծ անախորժութիւններ կարող է պատճառել մի ընտանիքի հօրը։ Նա չի կարող դիմանալ հասարակական կարծիքի ծանրութեանը։ Իսկ եթէ դիմանայ էլ, միթէ նոյնը կարո՞ղ է երաշխաւորել և Ագեւախիզայի համար, որին պիտի տանէ մի օտար և անձանօթ շրջան։

Մրանք էին իմ ընդդիմութեան մօտիվները։ Սակայն Սանթուրեանը ինձանից աւելի լուրջ էր մտածել այդ բոլորի մասին։ Նա հերքեց իմ բոլոր առարկութիւնները։ Վճիռը անխախտելի էր։ Ես չըկամեցայ նրա հետ երկար վիճել։ Այն շար կասկածը, որ յղացել էր իմ սրտում նրա առողջութեան մասին, այժմ աւելի ամրացել էր։ Այդ օրը նա այնքան թոյլ էր և դիւրագրգիւ, որ ես աւելի նրա կեանքի քան ամուսնութեան մասին էի մտածում։

Պսակը կայացաւ հայոց եկեղեցական օրէնքներով—Ագեւախիզան բողոքական էր։ Ինչպէս ազնիւ որդի, Սանթուրեանը իւր մօրը այդ մասին հաղորդել էր դեռ երկու շաբաթ առաջ, ուղար-

կելով նամակի հետ Ադելաիդայի լուսանկարը։ Հարսանիքից երկու օր առաջ նա ստացել էր պատասխան։ Մայրը ընդդիմութիւն չէր ցոյց տալիս, բայց ազաչում էր զգոյշ լինել իւր ընտրութեան մէջ։ Երեւի, որդին առ այժմ ճշմարտութիւնը թագցրել էր նրանից... Եւ լաւ էր արել։

— Գիտեմ, այժմ ինձ ատոզների և արհամարոզների թիւը պէտք է աւելանայ, — ասում էր նա պսակի երկրորդ օրը, — բայց ես արդար եմ իմ խղճի առջև, և դա ինձ բաւական է։ Ոչ մի հալածանք չի կարող ինձ ստիպել զղջալ իմ արածի մասին։ Ա՛խ, Միրաբեան, հաւատացի՛ր, ես քեզ սիրում եմ ոչ միայն նրա համար, որ դու իմ միակ բարեկամն ես։ Ոչ, դա դեռ քիչ է. ես քո մէջ տեսնում եմ մտքի անկախութիւն, դու ուրիշի խելքով չես ապրում, օրէնք դարձած նախապաշարմունքները քեզ շատ չեն կաշկանդում... Բայց և այնպէս էլի կաշկանդում են։ Գիտեմ, ուսանողները քեզ էլ սկսել են խորթ աչքով նայել, իմ պատճառով։ Բայց անկեղծ պատասխանիր. զգո՞ւմ ես, որ վատ բան ես արել, ինձ նման մի անհաշտ մարդու հետ ընկերանալով։

— Երբէ՛ք, — գոչեցի ես զգացված, — ընդհակառակը, ես շատ գոհ եմ իմ արածից։

— Տո՛ւր ինձ ձեռք, — ասաց նա ողևորված, — մենք յաւիտեան կըմնանք բարեկամներ։ Եւ մնացինք։

Երեք ամիս անցած, Ադելաիդան ծնեց մի

արու գաւաի։ Այդ ժամանակները թէ՛ ես և թէ Սանթուրեանը այնքան զբաղւած էինք վերջին քննութիւններով, որ հազիւ շաբաթը մի անգամ տեսնվում էինք։ Բայց իմ աչքից չէր խուսափում այն տխուր հանգամանքը, որ նա օրից օր թառամում էր և դալկանում։ Նա չէր հազում, և դա միակ բանն էր, որ յոյս էր տալիս ինձ, թէ հիւանդութիւնը թորախտ չէ։ Եւ որքան նա մարմնապէս թուլանում էր, այնքան հոգեկան կրակը սաստկանում էր, այնքան աչքերի փայլը զօրեղանում։ Թւում էր ինձ, որ հէնց այդ կրակն է նրան արագ արագ լափում, և եթէ մի ցաւ ունէ, հէնց դա է։

Ես ամեն օր լսում էի այն բոլորը, ինչ-որ ուսանողների շրջանում խօսվում էր Սանթուրեանի համարձակ քայլի մասին։ Ամենը դատապարտում էին այդ քայլը, ամենը համարում էին նրան անբարոյական։ Իսկ ես, որ միակ մարդն էի իսկական իրողութեանը տեղեակ, չըզիտէի ո՛ր մէկին ապացուցանեմ իմ բարեկամի վարմունքի ազնուութիւնը։ Ոչ ոք չէր ուզում հաւատալ, թէ Ադելաիդան այն թշուառ էակներից չէ, ինչ-որ կարծում էին։

— Դրօշմը ճակատին էր, երբ ամուսնացաւ, միթէ կարելի՞ է հերքել արեւի լոյսը, — ասում էին շատերը։

Ինձ վրդովեցնում էր մանաւանդ մի հանգամանք. ոչ ոքի յայտնի չէր, թէ ո՞վ է այդ դրօշմի հեղինակը։ Ես մի վերին աստիճանի անա-

խորժ գրութեան մէջ էի: Մի կողմից, ուղում էի ամենի առջև պատուել Զարիֆեանի դիմակը, միւս կողմից, անյարմար էի համարում: ձյմարիտ է, Սանթուրեանը ինքը, հարկաւոր եղած ժամանակ, կը պարզէր իրողութիւնը, այնքան նա համարձակ էր իւր արածների վերաբերմամբ, բայց համոզված էի, որ դա կարող էր Ադելաիդային մի առանձին վիշտ պատճառել:

Կային մարդիկ, որ ասում էին. «Սանթուրեանը սեպհական մեղքն է քաւում:» Դա համեմատաբար մի նպաստաւոր կարծիք էր: Եւ ես միայն դրա դէմ էի լռում, հասկացնել տալով ուսանողներին, թէ իբր հէնց այդ է զուտ ճշմարտութիւնը:

Մի անգամ համալսարանի դահլիճներից մէկում կովկասցի ուսանողները հաւաքված խորհրդակցում էին մի ինչ-որ «կովկասեան քէֆի» մասին: Ես չէի հետաքրքրվում, բայց լռում էի նրանց խօսածները: Սկսեցին անուններ գրել: Մէկը ծագրաբար յիշեց և՛ Սանթուրեանի անունը: Դա նորանոր բամբասանքների և սրախօսութիւնների առիթ տուեց մի խումբ ուսանողների: Արդէն ես սկսել էի արհամարհել նրանց կարծիքները, և դա աւելի էր կատաղեցնում նրանց, թէև իմ ապտակը դեռ չէին մոռացել:

— Տեսէ՛ք, — ասաց մի սրախօս, — մենք միայն մի դիպլոմով կը վերադառնանք հայրենիք, իսկ նա երկուսը կը տանէ:

— Ինչո՞ւ ոչ երեքը, — նկատեց մի ուրիշը:

— Երրորդը կեղծ է, — պատասխանեց սրախօսը:

Դարձեալ արիւնը խփեց դիսիս, դարձեալ կամենում էի պատժել այդ շարախօսներից մէկին: Բայց այդ ըսպէին մէկը յանկարծ բռնեց իմ թևից և յետ քաշեց ինձ: Նայեցի, և տեսնեմ ինքը Սանթուրեանն է: Նա հեռուից հասկացել էր բանի էութիւնը: Ուսանողները, նրան տեսնելով, յետ քաշվեցին, որ ցրվեն:

— Սպասեցէ՛ք, պարոններ, — դուչեց նա:

Բոլորը կանգ առին իրանց տեղերում:

— Պարոններ, խօսեց իմ բարեկամը վրդովված ձայնով, — դիտեմ վէճը ինձ էր վերաբերվում, և իմ ընկերը ուղում էր ինձ պաշտպանել: Դուք շատ բարի էք իմ վերաբերմամբ: Խնդիրը ձեր քէֆին մասնակցելու մասին չէ: Իհարկէ, ոչ դուք կը հրաւիրէք, ոչ ես կը կամենամ իմ ներկայութեամբ ապականել ձեր վերջին ուսանողական ժողովը: Բայց լսեցէ՛ք միայն մի խօսք: Դուք դատապարտում էք իմ վերջին քայլը, դուք համարում էք նրան անբարոյական: Իսկ ե՛ս... ես համարում եմ աւելի, քան բարոյական: Դուք ասում էք, թէ ես ամուսնացել եմ մի թշուառ էակի հետ: Եթէ ինքիւրը միայն ինձ վերաբերվէր, իհարկէ, կը լռէի, ինչպէս միշտ լռել եմ ձեր բոլոր, ներեցէ՛ք, զրպարտութիւնների դէմ... Բայց այժմ... դուք անխնայ արատաւորում էք մի անուն, որ ինձ համար թանկ է, քան ես և

իմ անունը: Գուք անարդար էք վարվում: Ես չեմ վիճիլ ձեզ հետ այդ մասին: Բայց ընդունենք մի բուսկ, որ ձեր ասածը ճիշդ է, որ ես, իրաւ, մի թշուառ էակի հետ եմ կապել իմ կեանքը: Նախ դա ինձ և միայն ինձ է վերաբերվում, երկրորդ, եթէ քաջ էք, եթէ գոնէ մի կաթիլ անկեղծութիւն ունէք, եթէ ձեր հոգին բոլորովին ստրկացած չէ, բարեհաճեցէք պատասխանել այս հարցին. «ո՞րն է լաւ, կնո՞յր ցեխի մէջ գլորելը, թէ՞ ցեխից հանելը...» Ես սպասում եմ պատասխանի...

Նա կանգնած էր դահլճի մէջտեղում և նայում էր իւր շուրջը: Նա ինքը յուզմունքից դողում էր, բայց ճիգ էր անում գապել իրան, և յաջող: Նրա նիհար, գունատ, հիւանդոտ դէմքը խորին սրամտութեան հետ արտայայտում էր նաև հոգու անսահման անվեհերութիւն: Նա գեղեցիկ էր, գրաւիչ և ազգու այդ բուսկին: Բոլոր ուսանողները այդ վայրկեանին ինձ թւում էին ոչնչութիւն: Ես հիացած նայում էի նրան, մտքումս ծափահարելով նրա ամեն մի բառը: Պատրաստ էի պաշտպանել նրան մինչև իմ արեան վերջին կաթիլը և սպասում էի, թէ ով կը յանդգնէ ձեռք բարձրացնել կամ մի կոպիտ խօսք ասել նրան:

Բայց ամենը լուռ էին և ապշած նայում էին նրան: Դերերը փոխվել էին: Նա՛, որ միշտ մեղադրվում էր և միշտ դատապարտվում, այժմ,

կարծես, դարձել էր դատաւոր և իւր անողոր հարցը դրած, սպասում էր պատասխանի: Իսկ պատասխան չէր լսվում: Ուսանողները նայում էին միմեանց երեսին: Սրախօս պարոնը աշխատում էր ժպտալ, բայց շփոթված էր: Ինձ համար այդ հասկանալի էր. նրա խիղճը մաքուր չէր, որովհետև նա մէկին արդէն «գլորել էր ցեխի մէջ»:

— Ձէ՞ք պատասխանում, — արտասանեց Սանթուրեանը, ձայնը բարձրացնելով, — լսո՞ւմ էք... Հասկանում եմ, որովհետև ձեզանից շատերի համար գուցէ անհնարին է պատասխանել... Մ՛օ, ոչ ոքի չեմ ուզում դատապարտել, թէև դատապարտելու փաստեր ունեմ... Բայց պարոններ, բաւական է: Գուք հալածում էք ինձ, ես տանում եմ ձեր բոլոր վիրաւորանքները: Բայց, հաւատացէք, դա ինձ համար այնքան վշտալի չէ, որքան ձեր սխալ հասկացողութիւնը պատուի և պատուասիրութեան մասին: Ուրիշ ոչինչ ասելիք չունեմ... Դա իմ վերջին հրաժեշտն է... Միրաբեան, կամենո՞ւմ ես ինձ հետ գնալ...

Այս ասելով, նա քայլերը ուղղեց դէպի դուրս: Ուսանողները ճանապարհ տուեցին նրան:

— Հիւանդ է, — շնչաց մէկը:

— Չարժէ խօսել նրա հետ, — ասաց միւսը:

— Տեսէ՞ք, նոր է խելքի եկել և ուզում է հաշիւ պահանջել մեզանից, — ասաց երրորդը:

Ես ոչ ոքի վրայ ուշադրութիւն չըդարձրի:

ինձ թուում էր, որ Սանթուրեանը իւր վրէժն առաւ և վերջացրեց: Ես հաստատ քայլերով հետևեցի նրան, և այն օրից կտրեցի իմ կապը ուսանողների հետ...

Մօտեցել էր դարունը: Մոսկվա դետի սառոյցը վաղուց արդէն կոտրվել էր: Արեգակի ջերմութիւնը զգալի էր դարձել: Զատիկուայ տօներից յետոյ սկսվեցին մեր քննութիւնները և վերջացան մայիսի կիսին:

Մի սիրուն, պայծառ, թէև բաւական ցուրտ արեգակնային օր էր, երբ, վերջին հրաժեշտ տալով համալսարանին, իրաւաբանի դիպլոմը ձեռքս, վերադառնում էի իմ սենեակը ուրախ, երջանիկ, լի ապագայի քաղցր յոյսերով: Մտադիր էի շտապով ճաշել և անմիջապէս գնալ Սանթուրեանի մօտ՝ իմ ուրախութեանը նրան էլ մասնակից անելու: Նրա քննութիւնները դեռ չէին վերջացել: Հիւրասիրելու առաջին հերթն իմն էր: Մտածում էի իրիկնադէմին նրան և Ադելաիդային հրաւիրել մի հիւրանոց ընթրիքի: Ես զուրկ էի ուրիշ բարեկամներից:

Սակայն այդ հանդիսաւոր օրուայ իմ ուրախութեանը վիճակված չէր երկար շարունակվելու: Երբ, երգելով, ուրախ—ուրախ մտայ իմ սենեակը, սեղանիս վրայ գտայ մի տոմսակ հետևեալ բովանդակութեամբ. «Շտապեցէք գալ մեզ մօտ, Մարգարը ցանկանում է ձեզ հետ տեսնվել»: Այդ օրերը պէտք է, վերջապէս, թիֆլիսի պալա-

տում քննվէր Սանթուրեանի հօր գործը, որ այնքան ձգձգվել էր: Կարծեցի իմ բարեկամը այդ մասին տխուր հեռագիր է ստացել, երևի, կամենում է իւր վիշտը յայտնել ինձ: Բայց նամակը Ադելաիդան էր դրում, և այս հանգամանքը ինձ չվիժեցրեց... Մի շաբաթ էր ես նրանց չէի տեսել:

Չրդիտեմ ինչպէս ճաշեցի և կառք նստելով, շտապեցի իմ բարեկամի մօտ: Նրա այժմեան բնակարանը բաղկացած էր երկու փոքրիկ սենեակներից: Մէկը ծառայում էր իբրև ընդունարան, սեղանատուն, պարապելու սենեակ, միւսը ննջարան էր: Ադելաիդան ինձ դիմաւորեց դռների մօտ և շուարված հաղորդեց, թէ իւր ամուսինը հիւանդ է: Ես, կարծես, աւելի վատ լուրի էի սպասում, սառնասրտութիւնս չրկորցրի, մտայ ննջարան, ուր պառկած էր նա: Ես մօտեցայ նրա անկողնին: Նա սաստիկ տաքութեան մէջ էր, ճակատը այրվում էր, կուրծքը շնչառութիւնից ուժգին բարձրանում էր և ցածանում:

— Ոչինչ, — ասաց նա շնչալով ինձ հանգստացնելու համար, — մի քիչ տկար եմ, կանցնի...

Ես նստեցի նրա գլխի մօտ: Ադելաիդան շնչալով պատմեց իրողութիւնը: Չորս օր առաջ Սանթուրեանը մինչև ուշ երեկոյ պարապում է և յետոյ, թեթև գլխացաւ զգալով, պառկում է անկողնի: Այդ օրը երեխան հիւանդ է լինում, չի քնում, ծիծ չի ուտում, շարունակ լալիս է:

Սանթուրեանը ստիպված է լինում մինչև ըյս նրան ման ածել սենեակից սենեակ, իւր կրծքի վրայ սեղմած: Նա չի թողնում, որ մայրը անհանգստանայ: Ոտաբոբիկ, կուրծքը մերկ, նա ժամերով անցուդարձ է անում բաց և սառն յատակի վրայ: Առաւօտեան կանուխնա յոգնած, անքուն, Ադելաիդայից թագցնելով իւր գողոցը, վազում է բժշկի ետևից: Եւ նոյն բժիշկը, երբ երեկոյեան գալիս է կրկին անգամ երեխային տեսնելու, գտնում է իմ բարեկամին անկողնում պառկած:

Այն կրակը, որ տարիների ընթացքում մըղմըղ ուտում էր նրա հոգին, քայքայել էր նրա ամբողջ օրգանիզմը: Նրա համար դժուար էր դիմանալ մի ամենաթեթև հիւանդութեան անգամ: Ահա ինչու էի ես վախենում: Երբ բժիշկը եկաւ նրան նորից գննելու, ես թագուն խնդրեցի յայտնել ինձ, իբրև հիւանդի բարեկամին, ճշմարտութիւնը:

— Եթէ հիւանդի օրգանիզմը ամուր լինէր, — ասաց բժիշկը, — կարելի էր երաշխաւորել որ կ'առողջանայ: Բայց նրա թոքերը վաղուց են վնասված...

Ահա հէնց այդ բանն էր ինձ վախեցնում: Ես մի կերպ զսպեցի արտասուքս և, չրթունքներս կրծոտելով, անցայ ննջարան, նստեցի հիւանդի մօտ:

Այդ գիշեր մինչև ըյս նա անցկացրեց շատ

անհանգիստ: Ադելաիդան ստիպված էր ամբողջ ժամանակ զբաղվել երեխայով: Ոչ ծծմայր ունէին, ոչ ազախին:

Հիւանդը յնորքների մէջ էր, խօսում էր անկապ և թըլված լեզուով: Ես ստէպ ստէպ փոխում էի նրա ճակատի սառն կօմպրեսը և ժամը մի անգամ դեղի գդալը մօտեցնում բերանին:

Հետևեալ առաւօտ նա մի քանի ժամով ուշքի եկաւ և սկսեց ինձ հետ զրուցել: Նա խօսում էր իւր հօր գործի, մօր, եղբօր, քրոջ, Ադելաիդայի և նրա երեխայի մասին: Որքա՞ն սէր և գուրգուրանք էին զգացվում նրա խօսքերի մէջ: Իսկ Ադելաիդան իւր երախտագիտութեամբ և ակնածութեամբ լի հայեացքը չէր հեռացնում նրա երեսից: Իմ բարեկամը հիւանդացել էր երեխայի պատճառով, և այդ կրկնապատկում էր դերմանուհու սէրը և վիշտը:

Իսկ հիւանդը հաւատացած էր, որ շուտով, շուտով տաքութիւնը բոլորովին կանցնէ, երեկոյեան կամ վաղը ինքը ոտքի կրկանգնէ: Նա սկսեց խօսել ուսանողների, համալսարանի, պրօֆեսօրների և վերջին քննութիւնների մասին: Նա շտապում էր շուտով աւարտել քննութիւնները և վերագառնալ հայրենիք Ադելաիդայի հետ:

— Ես համոզված եմ, — ասաց նա Ադելաիդային, — որ մայրս և քոյրս քեզ պիտի շատ սիրեն...

Երբ Ադելաիդան անցաւ միւս սենեակ երեխային ծիծ տալու, նա խօսեց վերջին տեսարանի

մատին համալսարանում: Եւ չէր մեղադրում իւր հակառակորդներին, միայն ասում էր, թէ սահմանափակ խելքի և զարգացման տէր են, մտքի անկախութիւն և համոզմունքների քաջութիւն չունեն, ուրիշներից լսածները և կարգացածներն են թուժակի պէս կրկնում: Ներս մտաւ դարձեալ Ադելաիդան: Հիւանդը խօսքը փոխեց և սկսեց իւր կնոյ՝ հետ կատակներ անել, ծիծաղել: Պահանջեց երեխային, նայեց երեսին և իւր բարակ, դեղնած մատների ծայրերով քնքշաբար շոյեց նրա թաւշամորթ այտերը: Ադելաիդան այդ ժամանակ աշխատում էր ինձ չընայել...

Ճաշից յետոյ եկաւ բժիշկը, նայեց և գլուխը երկմտութեամբ շարժեց, մի խորհրդաւոր հայեացք ձգելով ինձ վրայ: Այս անգամ նա ինձ ասաց.

— Այս գիշեր ամեն ինչ կը պարզվէ...

Ուշ երեկոյ էր: Ես նստած էի իմ բարեկամի գլխի կողմում, իսկ Ադելաիդան նրա ոտքի մօտ, որպէս զի կարողանայ շարունակ նայել նրա աչքերին:

Դառն և թշուա՛ռ ժամեր, յաւիտեան պիտի կենդանի մնաք իմ յիշողութեան մէջ... Ես նստել էի մահամերձ մօրս անկողնի մօտ, զգացել էի մահու մօտաւորութիւնը իմ սրտին թանկ մի անձի: Բայց այլ էր այս անգամ: Ինձ տիրել էր մի բոլորովին անսովոր վիշտ: Օտար երկրում, օտար շրջանում, հեռու ծնողներից, վտանգաւոր

դրութեան մէջ պառկած էր մի աղնիւ, բարի, վեհանձն և տաղանդաւոր երիտասարդ: Ո՛վ գիտէ, ինչ յոյսեր և ձգտումներ կային նրա կրծքի տակ: Այն մարդը, որ բոլոր իւր ընկերներից արժանաւորն էր, հալածված էր, ատված և արհամարհված: Ինչո՞ւ: Որովհետեւ բնութիւնը նրա խելքին տուել էր ուրիշ ուղղութիւն և սրտի մէջ դրել էր տարբեր զգացումներ:

Ես էի, որ հասկանում էի նրան: Բայց հասկանո՞ւմ էի արդեօք բոլորը, ինչ-որ կար նրա մէջ, ընդունա՞կ էի արդեօք գնահատելու նրա բոլոր արժանաւորութիւնները: — Հազիւ թէ, որովհետեւ նրան ամբողջովին հասկանալու համար, պէտք էր նրա չափ խելօք լինէի, չեմ ասում նրա սրտի չափ ընդարձակ քրիստոնէական սիրտ ունենայի, որ, ի հարկէ, չունէի: Հասկանո՞ւմ էր գոնէ Ադելաիդան նրան: — Չէի կարծում: Ահա ինչու ինձ թուում էր, որ նա դարձեալ իրան մենակ է համարում: Մի անբացադրելի խորհրդաւոր ժպիտ էի նշմարում նրա դէմքի վրայ, երբ միւս սենեակից լսվում էր երեխայի լացի ձայնը... Գուցէ նա, այդ փոքրիկը միայն ապագայում, ինչպէս հարկն էր, հասկանար և գնահատէր Սանթուրեանին, նրա անսահման վեհանձնութիւնը: Բայց ե՞րբ...

Այն ինչ, մահը քայլ առ քայլ մօտենում էր, որպէս զի իւր սև ճանկերի մէջ առնէ իմ բարեկամին: Նրա մռայլ շուքն արդէն տարածվել էր

հիւանդի մահճակալի վրայ:

Աղեւախառն և ես նայում էինք միմեանց և ճիգն անում զսպել մեր արտասուքը: Հիւանդը պառկած էր երեսը դէպի պատը: Նրա զանգուր և սև մազերը, սպիտակ բարձի վրայ սփռված, լամպարի աղօտ լուսոյ ներքոյ մի շարագուշակ երևոյթ էին ներկայացնում:

Նա նոր էր դադարել խօսելուց: Նա շարունակ զառանցում էր իւր հօր դատի մասին: Նա կրկնում էր, թէ իւր հայրը անմեղ է: Հաւատում էր Ասածու արդարամտութեանը և ասում: «Նա կօղնի իմ հօրը, չի թողնիլ նրան անպաշտպան:»

Այո՛, պարոններ, այդ մարդը միշտ հաւատում էր Ասածու գոյութեանը: Եւ այդ այն ժամանակ, երբ մեր ընկերներն շրջանում ուրիշ հայեացքներ էին տիրում:

Այժմ նա լուռ էր: Անցան մի քանի ծանր, երկարատև ժամեր: Յանկարծ վերմակը շարժվեց, Սանթուրեանը դժուարութեամբ երեսը դարձրեց դէպի ինձ, վնտրելով իմ ձեռը: Նա իւր թոյլ և տակաւին ջերմ ձեռով սեղմեց իմ աջը և արտասանեց.

— Ձէ, վատ եմ... կուրծքս այրվում է...

Ես կարծեցի նա ջուր է ուզում: Բաժակը մօտեցրի բերանին: Նա յեւ մղեց: Նա նայեց դէպի սենեակի անկիւնը, այնտեղ, ուր վառարանն էր:

— Կրակ չըկայ, թող վառեն,— ասաց նա,— ցուրտ է...

Աղեւախառն իսկոյն կատարեց նրա ուղածը, և հինգ րոպէ չանցած, կրակը սկսեց չըջրթալով այրվել վառարանի մէջ:

— Հեռագիր չըկայ,— հարցրեց յանկարծ հիւանդը,— պիտի լինի...

Նա իւր հօր գործի մասին հեռագրի էր սպասում...

— Անպատճառ կըլինի,— աւելացրեց նա,— ուրախ հեռագիր...

Նա ձեռով նշան արու, որ օգնենք իրան բարձրանալու: Մենք նրան նստեցրինք անկողնի մէջ, մէջքին դարսելով բարձեր: Նա չէր կարողանում գլուխը ուղիղ պահել, բայց անպատճառ ուղում էր նստած մնալ:

Վառարանի մէջ կրակը այժմ այրվում էր, թանձր բոցեր արձակելով: Նա իւր հայեացքը դարձրեց դէպի այն կողմ և մի քանի վայրկեան նայում էր:

Ա՛խ, որքա՛ն խորհրդաւոր էր այդ պահին նրա դէմքը:

— Կրակը, կրակը,— արտասանեց նա թոյլ ձայնով,— այրում է իմ ներքը, վերջանում է...

Յետոյ նա գլուխը թեքեց կրծքին, կրկին բարձրացրեց և, նայելով ուղիղ իմ աչքերին, ասաց.

— Ձէ, մօտենում է... տո՛ւր ինձ ձեռք...

Ես ձեռս տուեցի նրան: Դարձեալ նայեց աչքերիս և ասաց.

— Խոստացիր, որ Ադելաիդային կուղարկես իւր քրոջ մօտ, Օդեսսա...

Ես խոստացայ, արտասուքս խեղդելով կուկորդումս: Այդ միջոցին Ադելաիդան միւս սեւ նեակումն էր: Խեղճ կին, նա չըզիտէր ինչ անէ: Անհուն վշտից խելքը կորցրած, նա շտապում էր մի սենեակից միւս սենեակ, մերթ երեխայի, մերթ հիւանդի մօտ: Նրան վրդովեցնում էր երեխայի լացը...

Սանթուրեանը նշան արաւ, որ պառկեցնեմ իրան: Նա գլուխը բարձին դրած, շարունակ նայում էր վառարանին: Այդ ժամանակ միտում էին փայտի վերջին կտորները: Յանկարծ հիւանդի աչքերը առանձին փայլ ստացան, դէմքը պայծառացաւ, ճակատը պարզվեց և նա բաւական հաստատ ձայնով գոչեց.

— Մի՛ թողնէք կրակը մարէ, մի՛ թողնէք, ես կրմեռնեմ...

Մենք նկատեցինք, որ նա աչքերով ինչ-որ փնտրում է, նայում է դէպի միւս սենեակ: Ես կարծեցի, որ նա երեխային է փնտրում: Հարցրի, գլխով բացասական նշան արաւ և շնչաց.

— Կրակը, իմ կրակը, տուէ՛ք...

Ադելաիդան առաջինը հասկացաւ նրա միտքը: Նա շտապեց միւս սենեակ և այնտեղից բերեց ինձ ծանօթ կարմիր տետրը, որի ճակատին խո-

չոր սև տառերով գրված էր «Կրակ»: Նա նայեց տետրին և ասաց.

— Գցի՛ր այնտեղ, ես այրվեցի, թող նա էլ այրվէ...

Խեղճ կինը չըզիտէր, կատարէ՞ հիւանդի պահանջը, թէ չէ, նայեց ինձ: Բայց հիւանդը իւր խոշոր աչքերով այնպէս էր աղերսում, որ մենք չըզիմացանք: Ադելաիդան տետրը ձգեց վառարանի մէջ...

Այդ ժամանակ լսվեց դռան զանգակի ձայնը: Ադելաիդան շտապեց դուրս: Հիւանդը ոչինչ չը լսեց: Նա շարունակ նայում էր վառարանին: Այնտեղ սկզբում բարձրացաւ թանձր ծուխ, ապա տետրը բոցավառվեց:

Ներս մտաւ Ադելաիդան և ինձ գաղտնի ցոյց տուեց մի հեռագիր: Ես կարդացի: Պալատը Սանթուրեանի հօրը արդարացրել էր...

Մի քանի վայրկեան Ադելաիդան և ես շփոթված էինք—յայտնե՞լ հիւանդին, թէ՞ ոչ: Չափազանց ուրախ լուրը կարող էր նրա վրայ սպանիչ ազդեցութիւն գործել: Բայց միթէ առանց այդ էլ նա չէ՞ր մեռնում: Թող, ուրեմն, հանգիստ մեռնէ: Այս էր մեր երկուսի լուռ միտքը:

Ես թեքվեցի դէպի հիւանդը, որ շարունակ նայում էր կրակին, և շնչացի.

— Մարդար, կարո՞ղ եմ քեզ մի ուրախ լուր հաղորդել...

Նրա աչքերը լայն բացվեցին, ձեռք դուրս

եկաւ վերմակի տակից: Ես հեռագիրը բռնեցի նրա աչքերի առջև և ասացի.

— Պալատը հօրդ արդարացրել է...

Նա հասկացաւ իմ ասածը: Իւր թոյլ ձեռով վերցրեց հեռագիրը և սեղմեց կրծքին:

— Տեսա՞ր, — շնչացին նրա շրթունքները:

Մօտեցաւ Ադելաիդան: Ես հեռացայ: Նա չորեց մահճակալի առջև և գրկեց հիւանդին: Եւ ե՛ս, միայն ե՛ս պիտի կրէի այդ սրտաշարժ տեսարանի ամբողջ ծանրութիւնը:

Վառարանի մէջ արդէն այրվել վերջացել էր «Կրակը»: Մխում էր միայն տետրի կազմից մի բարակ կարմիր-դեղնագոյն շերտ... Գիշերուայ ուղիղ երկու ժամն էր, երբ այն էլ այրվեց, մոխիր դարձաւ...

Ես փակեցի իմ բարեկամի աչքերը... Նա մինչև վերջին շունչը հերոսաբար դիմացաւ իր տանջանքներին...

Պարոններ, եթէ ես լինէի բանաստեղծ, կը վերակենդանացնէի Սանթուրեանի պատկերը իւր ամբողջ էութեամբ: Այն ժամանակ դուք կը տեսնէիք այն հազուագիւտ հերոսներից մէկի տիպարը, որոնք ծնվում են վեհ գործերի համար և մեռնում անյայտութեան մէջ...

Միրաբեանը լռեց, մի ծանր հոգոյ արձակելով կրծքից: Մենք սպասում էինք, որ նա իւր

վերջին խօսքը կընուիրէ Զարիֆեանին: Բայց նա ոչինչ չէր ասում, և ես առաջինը հարցրի.

— Իսկ Զարիֆեա՞նը, միթէ անպատիժ մնաց...

— Կան մարդիկ, որոնց ճակատագիրը հովանաւորում է և կեանքի մէջ պատժից ազատում... Գուցէ միայն ես կարող էի Զարիֆեանին պատժել, եթէ յայտնէի ձեզ նրա իսկական անունը: Բայց ինչո՞ւ. միթէ դա կը վերադարձնէր ինձ իմ բարեկամին: Թող ուրեմն իմ պատմութեան մէջ նրա անունը մնայ Զարիֆեան, իսկ ինքն իւր իսկական անունով վայելէ շրջանավայրի յարգանքը...

Այլ ևս Միրաբեանը ոչինչ չասաց, և փակեց հանդած վառարանի դռնակը...



ՀՀ Ազգային գրադարան



NL0685864

Շիրվանցադէի առանձին գրեւով եւ գրեղկներով լոյս
 տեսած գործերը.

Գինը հանապարհած.

1) Գործակցասարի յիշատակարանից, (սպառ- ված)	—r. 65 կ.
2) Նամուս, վէպ (սպառված)	1 „ 25 „
3) Արամբիկ, վէպ (սպառված)	1 „
4) Խնամակցասար, վէպիկ (սպառված)	65 „
5) Զուր յոյսեր, վէպ	1 „ 25 „
6) Արսէն Դիմախան, վէպ	1 „ 50 „
7) Վեպիկներ	50 „
8) Օրիորդ Լիզա, ուստերէն Թարգմանու- թեանը	25 „
9) Տասնուհինգ սարի անցած	10 „
10) Կրակ, զրոյց	30 „

Ցուագար, վեպը առանձին գրեղկով, նաև սպառված
 վեպերը երկրորդ անգամ հրատարակել գանկացողները կարող են
 պայմանների համար դիմել հետիլեակիին. Тифлиς, Ширванзадэ,
 Вельяминов. ул., д. Лорись-Меликова.

Գինն է. **30** կոպ.